ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ՄԻԱՎ-ՈՎ ԱՊՐՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԽԱՐԱՆԻ ԻՆԴԵՔՍ 2.0 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ 2023

ՄԻԱՎ-ՈՎ ԱՊՐՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԽԱՐԱՆԻ ԻՆԴԵՔՍ 2.0, ՀԱՅԱՍՏԱՆ, ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑ

96 էջ, Երևան 2023

«ԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ, ԻՐԱԿԱՆ ՄԱՐԴԻԿ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝

Մարիամ Մխիթարյան, Սոցիոլոգ-հետազոտող

ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ՝

- Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարություն
- «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» (ԻՀԱԿ) ՓԲԸ (ՀՀ Առողջապահության նախարարություն)
- ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերի համատեղ ծրագիր, հայաստանյան գրասենյակ
- ALE ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց Կենտրոնական Ասիայի Ասոցիացիա, Ղազախստան
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող մարդկանց Գլոբալ Ցանց, Նիդերլանդներ
- ՄԻԱՎ-ով ապրող կանանց միջազգային համայնք
- Ջոն Հոպկինսի Համալսարան, ԱՄՆ

Այս զեկույցը ստեղծվել է «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ի կողմից՝ ազգային հետազոտող Մարիամ Մխիթարյանի մասնակցությամբ և հրապարակվել է որպես «Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հիմնական բնակչությանն ուղղված ծառայությունների կայունություն» խորագրով տարածաշրջանային Ծրագրի, ինչպես նաև «SOS» Ծրագիր 2.0-ի մի մաս՝ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց Կենտրոնական Ասիայի Ցանցի աջակցությամբ:

Զեկույցում ներկայացված տեսակետները բացառապես պատկանում է հեղինակին և կարող են չհամընկնել գործընկերների տեսակետների կամ կարծիքների հետ:

ՏԱՐԱԾՈՒՄՆ ԱՆՎՃԱՐ Է

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Զեկույցում ներկայացված նյութը կարող է ամբողջությամբ կամ մասամբ վերարտադրվել առանց «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության նախնական համաձայնության, եթե հղումը պատշաճ կերպով կատարված է:

«Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հիմնական բնակչությանն ուղղված ծառայությունների կայունություն» խորագրով տարածաշրջանային Ծրագիրը, ինչպես նաև «SOS» Ծրագիր 2.0-ն՝ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց Կենտրոնական Ասիայի Ցանցի օժանդակությամբ:

Զեկույցը կարող է չարտացոլել այն կազմակերպությունների տեսակետը, որոնք աջակցել են ուսումնասիրությանը և հրապարակմանը:

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Հետազոտական թիմն իր խորին շնորհակալությունն է հայտնում բոլոր նրանց, ովքեր իրենց ներդրումն են ունեցել այս ծրագրում: Առանձնահատուկ շնորհակալություն ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց համայնքին՝ հետազոտության մեջ նրանց ակտիվ մասնակցության և առաջնորդության համար: Հետազոտական թիմը նաև բարձր է գնահատում ուսուցանողներին՝ ինչպես հրահանգավորման դասընթացներում, այնպես էլ տվյալների հավաքագրման գործընթացում իրենց կատարած ներդրման համար և շնորհակալություն հայտնում հետազոտության բոլոր մասնակիցներին՝ իրենց տրամադրած ժամանակի և անկեղծ տեսակետներով ու պատասխաններով կիսվելու համար:

Առաքելությունը չէր հաջողի առանց «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ նախագահ տիկին Ժենյա Մայիլյանի մշտական աջակցության և առաջնորդության: Թիմն իր անկեղծ շնորհակալությունն է հայտնում «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ի համակարգող պարոն Հովսեփ Դավթյանին, ով մեծ ջանքեր է գործադրել դաշտային աշխատանքների համակարգման և տվյալների հավաքագրման գործընթացի կազմակերպման հարցում: Հետազոտական թիմը բարձր է գնահատում «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ղեկավար պարոն Ստեփան Աթոյանի և Միավորված ազգերի կազմակերպության ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերի համատեղ ծրագիր, հայաստանյան գրասենյակի ղեկավար տիկին Ռոզա Բաբայանի կողմից ցուցաբերված անշահախնդիր աջակցությունը:

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում միջազգային փորձագետ տիկին Լյուբով Վորոնցովային (ՁԻԱՀ-ի հիմնախնդիրներով զբաղվող Եվրասիական կանանց ցանց) և տիկին Պիմ Լոուզին (ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ինդեքս ծրագրի պատասխանատու, GNP+)՝ այս առաքելության ընթացքում իրենց տեխնիկական աջակցության և ներդրումների համար:

ՄԻԱՎ-ՈՎ ԱՊՐՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԽԱՐԱՆԻ ԻՆԴԵՔՍ 2.0

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 6

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ 7

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ 9

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ 11

ԱՄՓՈՓՈՒՄ 12

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 17

2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 22

2.1 Հետազոտության աշխարհագրական ծածկույթ 22

2.2 Հետազոտության մասնակիցներ 23

2.3 Հետազոտության գործիք 25

2.4 Էթիկական վերանայում 26

2.5 Իրականացում 26

2.6 Ընթացակարգեր 27

2.7 Տվյալների վերլուծություն 28

3. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 29

3.1 ՄԻԱՎ-ՈՎ ԱՊՐՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ 29

3.2 ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ 35

3.3 ՆԵՐՔԻՆ ԽԱՐԱՆ 40

3.4 ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ 45

3.5 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ 52

3.6 ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ 56

3.7 ԽԱՐԱՆԻ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՈՉ ՄԻԱՎ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ 63

4. ՔՆՆԱՐԿՈՒՄ 65

5. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՇԱՀԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ 71

6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 77

7. ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 79

Հավելված Ի. Ամփոփ աղյուսակներ 80

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԱրԴ	Արդարադատության նախարարություն
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԹՕ	թմրամիջոց օգտագործող
ԻԱԻՄ	Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ
ԻՀԱԿ	Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն
ԿԳՄՍ	Կրթությանմ գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԿՍ	կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող
ԿՍԿ	կնոջ հետ սեռական կապեր ունեցող կին
ՀԿ	հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՈԲ	հակառետրովիրուսային բուժում
ՁԻԱՀ	ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԻԱՎ	մարդու իմունային անբավարարության վիրուս
ՍՀԿ	սոցիալական հասարակական կազմակերպություն
ՏՍՏ	տղամարդու հետ սեռական կապեր ունեցող տղամարդ
ՏԳ	տրանսգենդեր անձ

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Առանցքային համախմբություն – ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ինդեքս 2.0 հետազոտության համատեքստում առանձնացվում է 4 առանցքային համախմբություն. տղամարդկանց հետ սեռական հարաբերություններ ունեցող տղամարդիկ, տրանսգենդեր անձինք, կոմերցիոն սեռական ծառայություններ մատուցողներ, թմրանյութեր օգտագործողներ):

Գաղտնիություն – անձնական կամ գաղտնի տեղեկատվության գաղտնիության պահպանում, դրա՝ երրորդ կողմին փոխանցման կամ տարածման անթույլատրելիություն առանց այն անձի թույլատվության, որին առնչվում է տեղեկատվությունը: Գաղտնիության պահպանումը վստահության ձևավորման կարևոր բաղադրիչ է:

Խարան, խարանացում – անձի նկատմամբ զրպարտությունը, նվաստացումը և (կամ) այլ մարդկանց աչքում իր պատվից ու արժանապատվությունից զրկված լինելու ընկալումը: ՄԻԱՎ-ի նկատմամբ խարանը հաճախ հիմնված է գենդերի, սեռի կամ էթնիկ պատկանելության հետ կապված նախապաշարմունքների վրա: Մասնավորապես, ՄԻԱՎ-ը և ՁԻԱՀ-ը հաճախ կապված են հրապարակայնորեն դատապարտված վարքագծի հետ՝ սեռական ծառայությունների մատուցում, թմրամիջոցների օգտագործում, նույնասեռական հարաբերություններ: ՄԻԱՎ-ի հետ կապված խարանը ազդում է ոչ միայն ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց, այլ նաև նրանց մտերիմների վրա՝ներառյալ նրանց զուգընկերոջը կամ ամուսնուն/կնոջը, երեխաներին և ընտանիքի այլ անդամներին:

Խտրականություն – էապես նման իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ տարբեր վերաբերմունքի դրսևորում՝ առանց որևէ օբյեկտիվ հիմքերի և որևէ ողջամիտ բացատրության: Հաճախ խտրականությունը դրսևորվում է որպես խարանման հետևանք, և դրսևորվում է գործողություններով և/կամ անտարբերությամբ՝ ուղղված խարանի ենթարկվող անձանց: Օրինակ՝ ՄԻԱՎ-ի հետ կապված խտրականությունը դրսևորվում է մարդկանց նկատմամբ որոշակի վերաբերմունքով, որից նրանք հայտնվում են ոչ բարենպաստ վիճակում և ոտնահարում է նրանց իրավունքները՝ ՄԻԱՎ-ով ախտորոշված լինելու (կամ ախտորոշված լինելու կասկածի) հանգամանքով պայմանավորված կամ սերտորեն կապված է ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հետ (օրինակ՝ զուգընկերներ, ընտանիքի անդամներ): Խտրականությունը կարող է արտահայտվել տարբեր միջավայրերում՝ ընտանիքում կամ համայնքում, առողջապահական հաստատություններում, աշխատավայրում և կրթական միջավայրերում, ինչպես նաև պետական մակարդակով:

ԿՍ – կոմերցիոն սեռական ծառայություններ մատուցող տղամարդ/կին/մարդիկ, որոնք վաճառում են սեքս:

ՀՌՎ – ՄԻԱՎ-ի բուժում հակառետրովիրուսային դեղորայքի օգնությամբ:

ՄԻԱՎ-ով ապրող մարդ/իկ – եզրույթ, որն օգտագործվում է սահմանելու մարդուն կամ մարդկանց խումբը, որոնք ունեն ՄԻԱՎ դրական կարգավիճակ:

ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց ինքնօգնության խումբ – ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց պաշտոնապես կամ ոչ պաշտոնապես կազմակերպված խումբ, որի նպատակն է ապահովել փոխադարձ օգնություն,

հնարավորություն կիսվելու իրենց ՄԻԱՎ-ով ապրելու փորձառությամբ և պաշտպանել ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շահերը:

ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ինդեքս – ստանդարտացված գործիք է ապացույցներ հավաքելու համար, թե ինչպես են խարանն ու խտրականությունը ազդում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց կյանքի վրա: ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ինդեքսը մշակվել է ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց կողմից՝ հենց իրենց համար օգտագործելու նպատակով, որը ստեղծվել է աջակցելու ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող մարդկանց ավելի մեծ ներգրավվածության սկզբունքին, որտեղ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց ցանցերը լիազորված են ղեկավարելու ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ինդեքսի հետազոտության իրականացումը:

ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց ցանց – ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց խումբ, ասոցիացիա կամ համայնք, որոնք ունեն նույն նպատակները:

Ներքին (կամ ընկալվող) խարան – եզրույթ, որով ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ նկարագրում են, թե ինչպես են իրենց զգում (ամենից առաջ ամոթը ՄԻԱՎ դրական կարգավիճակի համար): Դա կարող է հանգեցնել ցածր ինքնագնահատականի, դեպրեսիայի, անարժեքության զգացման, ինչպես նաև կարող է վնասել նրանց սոցիալական և անձնական հարաբերությունները՝ խտրականության վախի պատճառով նրանց հեռու պահելով տարբեր ծառայություններից և հնարավորություններից:

Տեղեկացված համաձայնություն – կամավոր համաձայնություն կամ թույլտվություն՝ տրված լիակատար իմացությամբ առ այն, թե ինչ հետևանք կարող է ունենալ (օրինակ՝ ռիսկերն ու օգուտները): Օրինակ, եթե ինչ-որ մեկը որոշի, որ ցանկանում է ՄԻԱՎ-ի թեստ հանձնել և նա խորհրդատուից ստանում է համապարփակ և հասկանալի տեղեկատվություն թեստի վերաբերյալ, որից հետո նա համաձայնում է ՄԻԱՎ-ի թեստ հանձնել, դա կկոչվի տեղեկացված համաձայնություն:

Տնային տնտեսություն – մարդկանց խումբ, որոնք ապրում են միևնույն վայրում (տուն կամ այլ բնակելի վայր)՝ կիսելով տարածք և ռեսուրսներ. նրանք հաճախ, բայց ոչ պարտադիր կերպով, նույն ընտանիքի անդամներ են:

Տրանսգենդեր անձ – անհատ, որը ժամանակավորապես կամ մշտապես իրեն նույնականացնում է ծննդյան ժամանակ հաստատված գենդերից տարբերվող գենդերի հետ: Վերաբերում է այն անձանց, որոնք մշտապես ապրում են իրենց նախընտրած գենդերին համապատասխան, իսկ բժշկական միջամտության ենթարկվելը պարտադիր պայման չէ:

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1. Երկրի բնակչությունն ըստ մարզերի և ընտրված բնակավայրերի 23
Աղյուսակ 2. Ընտրանքի ծավալում ակնկալվող մասնակիցների պլանավորված բաշխումը 24
Աղյուսակ 3. Տարիքն՝ ըստ գենդերի, n=531 29
Աղյուսակ 4. Կարգավիճակի իրազեկումն՝ ըստ գենդերի, n=531 30
Աղյուսակ 5. Ներկայումս ինտիմ/սեռական հարաբերություններում լինելն՝ ըստ սեռի, n=531 30
Աղյուսակ 6. Ներկայումս ինտիմ/սեռական հարաբերություններում լինելն՝ ըստ առանցքային և խոցելի համախմբությունների 30
Աղյուսակ 7. Զուգընկերոջ կարգավիճակն՝ ըստ գենդերի, n=378 31
Աղյուսակ 8. Տանը հոգածության ներքո գտնվող երեխաների թիվն՝ ըստ սեռի, n=531 31
Աղյուսակ 9. Տանը հոգածության ներքո գտնվող երեխաների թիվն՝ ըստ առանցքային և խոցելի համախմբությունների 31
Աղյուսակ 10. ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում զբաղվածությունն՝ ըստ սեռի, n=531 33
Աղյուսակ 11. ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում զբաղվածությունն՝ ըստ առանցքային և խոցելի համախմբությունների 33
Աղյուսակ 12. ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց աջակցող խմբերին անդամակցությունն՝ ըստ սեռի, n=531 35
Աղյուսակ 13. ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց աջակցող խմբերին անդամակցությունն՝ ըստ առանցքային և խոցելի համախմբությունների 35
Աղյուսակ 14. Հետևյալ մարդիկ/մարդկանց խմբերը տեղյա՞կ են Ձեր ՄԻԱՎ կարգավիճակի մասին 35
Աղյուսակ 15. Կարգավիճակի բացահայտման փորձառությունն (Դատողություն 1)՝ ըստ սեռի, n=531 36
Աղյուսակ 16. Կարգավիճակի բացահայտման փորձառությունն (Դատողություն 1)՝ ըստ առանցքային և խոցելի համախմբությունների 36
Աղյուսակ 17. Կարգավիճակի բացահայտման փորձառությունն (Դատողություն 2)՝ ըստ սեռի, n=531 37
Աղյուսակ 18. Կարգավիճակի բացահայտման փորձառությունն (Դոտողություն 2)՝ ըստ առանցքային և խոցելի համախմբությունների 37
Աղյուսակ 19. Խարանի և խտրականության փորձառություններն՝ ըստ սեռի, առանցքային և խոցելի համախմբությունների 38
Աղյուսակ 20. ՄԻԱՎ կարգավիճակի ազդեցությունը սթրեսը հաղթահարելու ունակության վրա (Դատողություն 1)՝ ըստ սեռի, n=531 40
Աղյուսակ 21. ՄԻԱՎ կարգավիճակի ազդեցությունը սթրեսը հաղթահարելու ունակության վրա (Դատողություն 1)՝ ըստ առանցքային և խոցելի համախմբությունների 40
Աղյուսակ 22. ՄԻԱՎ կարգավիճակի ազդեցությունը ինքնավստահության վրա (Դատողություն 1)՝ ըստ սեռի, n=531 41
Աղյուսակ 23. ՄԻԱՎ կարգավիճակի ազդեցությունը ինքնավստահության վրա (Դատողություն 1)՝ ըստ առանցքային և խոցելի համախմբությունների 41
Աղյուսակ 24. Վերջին 12 ամիսների ընթացքում ՄԻԱՎ կարգավիճակով պայմանավորված գործողություններն՝ ըստ սեռի, առանցքային և խոցելի համախմբությունների 43
Աղյուսակ 25. Ինքնախտրականության դրսևորումներ 45
Աղյուսակ 26. ՄԻԱՎ-ի նկատմամբ թեստավորումն՝ ըստ սեռի, n=531 46

Աղյուսակ 27. ՄԻԱՎ-ի նկատմամբ թեստավորումն՝ ըստ առանցքային և խոցելի համախմբությունների 46
Աղյուսակ 28. Թեստավորվելու շուրջ մտածելու ժամանակահատվածն՝ ըստ սեռի, առանցքային և խոցելի համախմբությունների 47
Աղյուսակ 29. Ախտորոշման պահի և բուժումը սկսելու միջև ընկած ժամանակահատվածն՝ ըստ սեռի, առանցքային և խոցելի համախմբությունների 48
Աղյուսակ 30. ՀՌՎ բուժման դադարեցման պատճառներն՝ ըստ սեռի, առանցքային և խոցելի համախմբությունների 50
Աղյուսակ 31. Բժշկական հաստատություններում ծառայություններ ստանալու փորձառությունն՝ ըստ սեռի, առանցքային և խոցելի համախմբությունների 53
Աղյուսակ 32. Սեռական և վերարտադրողական առողջությունն՝ ըստ խմբերի 55
Աղյուսակ 33. Իրավունքների ոտնահարումն՝ ըստ սեռի, առանցքային և խոցելի համախմբությունների 58
Աղյուսակ 34. Խտրականության ձևերն՝ ըստ առանցքային և խոցելի համախմբությունների 63
Աղյուսակ 35. Այլոց իրազեկվածությունը գենդերային նույնականացման կամ սեռական կողմնորոշման մասին՝ ըստ առանցքային և խոցելի համախմբությունների 64

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Գծապատկեր 1. Կրթության մեջ ներկայիս ներգրավվածությունն՝ ըստ սեռի, առանցքային և խոցելի համախմբությունների 32
Գծապատկեր 2. Կրթական մակարդակն՝ ըստ սեռի, առանցքային և խոցելի համախմբությունների 33
Գծապատկեր 3. Վերջին 12 ամիսների ընթացքում հիմնական կարիքների բավարարումն՝ ըստ սեռի, առանցքային և խոցելի համախմբությունների 34
Գծապատկեր 4. ՀՈՎ բուժումն՝ ըստ սեռի, առանցքային և խոցելի համախմբությունների 47
Գծապատկեր 5. Բուժման ընդհատումը վերջին 12 ամսվա ընթացքում՝ ըստ սեռի, առանցքային և խոցելի համախմբությունների 49
Գծապատկեր 6. Ընդհանուր առողջական վիճակն՝ ըստ սեռի, առանցքային և խոցելի համախմբությունների 51
Գծապատկեր 7. Տարբեր հիվանդությունների նկատմամբ զգայունությունն՝ ըստ առանցքային և խոցելի համախմբությունների 51
Գծապատկեր 8. ՄԻԱՎ-ից բացի՝ այլ պատճառներով կլինիկաներ այցելությունների ժամանակ կարգավիճակի բացահայտումն՝ ըստ սեռի, առանցքային և խոցելի համախմբությունների 55
Գծապատկեր 9. Ցանցերին կամ աջակցության խմբերին անդամակցումն՝ ըստ առանցքային և խոցելի համախմբությունների 64

ԱՄՓՈՓՈՒՄ

ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ինդեքս 2.0 հետազոտության նպատակն էր հավաքագրել տվյալներ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և թիրախային խմբերի նկատմամբ խարանի, խտրականության և իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ, ինչպես նաև օգտագործել հետազոտության արդյունքները որպես գործիք տեղական, ազգային և գլոբալ մակարդակներում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց իրավունքների պաշտպանության համար: Հետազոտությունը մշակվել է ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց կողմից և ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց համար:

Այս հետազոտության մեթոդաբանությունը հիմնված է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող մարդկանց գլոբալ ցանցի (GNP+), ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող կանանց միջազգային համայնքի (ICW) և ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերի համատեղ ծրագրի (UNAIDS) կողմից մշակված և առաջարկված մեթոդի վրա: ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ինդեքս 2.0 հետազոտությունն իրականացվել է ոչ փորձարարական, նկարագրողական մոտեցմամբ՝ քանակական հետազոտության մեթոդի կիրառմամբ: Թիրախային խմբերի ներկայացուցչական ընտրանքով հետազոտության համար ձևայնացված հարցաթերթի կիրառումը նպաստել է երևույթների ավելի խորը և համապարփակ ընկալման զարգացմանը ինչպես ազգային, այնպես էլ գլոբալ մակարդակներում, իսկ հետագայում կարող է նպաստել ՄԻԱՎ-ի վերահսկման և կանխարգելման ծառայությունների որակն ու մատչելիությունը բարելավելու միջոցառումների փաթեթի մշակմանը:

Ներկայացված բացահայտումներն ու եզրակացությունները ձևավորվել են քանակական տվյալների վերլուծության արդյունքում. հետազոտությունն իրականացվել է հանրապետությունում ՄԻԱՎ վարակի համաճարակաբանական իրավիճակի ընդհանուր բարելավման համատեքստում: Կարելի է պնդել, որ միջազգային և ազգային շահագրգիռ կողմերի համատեղ ջանքերը հանգեցրել են բուժման և խնամքի պրակտիկայի օպտիմալացմանը, ինչը պետությանը մոտեցրել է «90-90-90» ռազմավարության նպատակներին հասնելուն: Պետությունն ընդունում է ՄԻԱՎ կարգավիճակով պայմանավորված խարանի և խտրականության խնդիրները և այն համարում է Հայաստանում «90-90-90» ռազմավարությունն իրագործելու հիմնական խոչընդոտներից մեկը:

2021թ. հունիսի 30-ի դրությամբ՝ համաճարակի 33 տարիների ընթացքում, ՀՀ-ում պաշտոնապես գրանցվել է ՄԻԱՎ վարակի 4366 (3029 դեպք տղամարդկանց և 1337 դեպք կանանց շրջանում) և ՁԻԱՀ-ի 2128 դեպք[1]: Արձանագրված մահվան դեպքերի թիվը 989 է: 2021թ.-ի առաջին կեսին ՀՀ քաղաքացիների շրջանում գրանցվել է ՄԻԱՎ վարակի 196 դեպք: Համաճարակի առաջին տարիներին ՄԻԱՎ վարակի փոխանցման բոլոր նոր դեպքերի երկու երրորդը պայմանավորված էր թմրամիջոցների ներերակային օգտագործողների շրջանում ոչ անվտանգ ներարկումներով, մեկ երրորդը՝ հետերոսեքսուալ ճանապարհով վարակի փոխանցմամբ: Ինչևէ, 2005թ.-ից ի վեր, հետերոսեքսուալ ճանապարհը դարձել է վարակի փոխանցման հիմնական ուղին: Միևնույն ժամանակ, թմրամիջոցների ներերակային օգտագործմամբ պայմանավորված ՄԻԱՎ վարակի փոխանցման դեպքերի համամասնությունը կտրուկ նվազել է՝ 2019թ.-ին կազմելով ընդամենը 7.6%[2]:

[1] ԻՀԱԿ տվյալներ, սեպտեմբերի 9, 2021թ.
[2] Տես[1]

Համաձայն ԻՀԱԿ-ի տրամադրած տեղեկատվության՝ 2022 թվականի հուլիս ամսվա դրությամբ Հայաստանում գրանցվել է 3277 ՄԻԱՎ վարակակիր (18 և բարձր տարիքի): Շուրջ 89%-ը ստանալիս է եղել ՀՈՎ բուժում (n=2917), գրանցված ՄԻԱՎ վարակակիրների 33%-ը (n=1091) կանայք են, որոնցից 1004-ը կամ 92%-ը ստանալիս է եղել ՀՈՎ բուժում, իսկ առանցքային համախմբությունը կազմում է գրանցվածների 41.4%-ը:

ՀՀ-ում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ինդեքս 2.0 հետազոտությունը թիրախավորել է ամենաբարձր և միջին մակարդակի տարածվածություն ունեցող բնակավայրերը (գյուղական և քաղաքային)՝ ներառելով ՀՀ երեք մարզերը՝ Երևան, Լոռի և Շիրակ: Վերջնական ընտրանքի չափը որոշվել է 531 միավոր՝ ներառելով ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց առանցքային և խոցելի համախմբությունների ներկայացուցիչներին (ԹՕ, ԿՍ, SUS, ԿՍԿ, ՏԳ և բիսեքսուալներ): Հետազոտությանը մասնակցելու իրավունք են ունեցել 18 տարին լրացած անձինք, ովքեր ունեցել են իրենց ՄԻԱՎ կարգավիճակի մասին առնվազն 12 ամիս վաղեմության իմացություն, ովքեր խոսում են հայերեն և կարող են տրամադրել մասնակցության իրազեկված համաձայնություն: Հարցվածները հավաքագրվել են՝ ըստ ձևայնացված մեթոդաբանության և ընտրանքային երկու մեթոդների կիրառման.

- անցկացման վայրի վրա հիմնված մոտեցում, որի կիրառմամբ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հետ հարցազրույցներն իրականացվել են բուժհաստատությունում, ՀԿ-ների տարածքում, վերջիններիս տներում կամ նրանց հետ աշխատող համայնքային կազմակերպությունների գրասենյակներում, և
- սահմանափակ շղթայական ուղղորդման մոտեցում, որի պարագայում հարցազրույցներն իրականացվել են ՄԻԱՎ-ի բուժման և խնամքից դուրս գտնվող ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հետ՝ ներառելով առանցքային և խոցելի համախմբությունների ներկայացուցիչներին: Հետազոտության ընթացքում օգտագործվել է ձևայնացված գործիք՝ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ինդեսքս 2.0 հարցաթերթը: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ առողջապահության նախարարության հավանությամբ: Հետազոտությանը մասնակցելը եղել է կամավոր:

Ընդհանուր առմամբ, ՀՀ-ում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց **իրավիճակը, հատկապես կանանց և առանցքային համախմբության ներկայացուցիչների շրջանում, բնութագրվում է ինքնախարանի բարձր մակարդակով**: Խարանը բացասաբար է անդրադառնում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց, մասնավորապես՝ կանանց, տնտեսական և հոգեսոցիալական բարեկեցության վրա. նրանցից շատերը աշխատանք չունեն:

Կանանց կեսից ավելին նշել է, որ չեն կարողացել իրագործել անձնական և մասնագիտական նպատակները: Նրանց համար ավելի դժվար է եղել խոսել իրենց կարգավիճակի մասին, և նրանք ավելի շատ են իրենց մեղավոր զգացել և ամաչել իրենց ՄԻԱՎ կարգավիճակի պատճառով: Միևնույն ժամանակ, նրանք, ի տարբերություն մյուսների, ամենաքիչն են տեղեկացված եղել իրենց վիրուսային ծանրաբեռնվածության վերաբերյալ: Իրենց ՄԻԱՎ կարգավիճակի պատճառով կանայք, բառացիորեն, բռնության են ենթարկվել 5 անգամ ավելի հաճախ, քան ՄԻԱՎ-ով ապրող տղամարդիկ:

ՀՀ-ում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ինդեքս 2.0 հետազոտության արդյունքները թույլ են տվել եզրահանգել հետևյալի մասին.

- Հարցման մասնակիցների **51%-ն անցել է ՄԻԱՎ թեստավորում առանց իր իմացության և համաձայնության,** ընդ որում՝ նրանց կեսից ավելին կանայք են:
- **ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց մեծ մասը (99.1%)** հարցազրույցի ժամանակ եղել է **ՄԻԱՎ-ի բուժում ստանալիս:**
- Յուրաքանչյուր երրորդ ՄԻԱՎ-ով ապրող մարդ **չի ունեցել դրական փորձառություն իր կարգավիճակը** հարազատներին և մտերիմ մարդկանց **բացահայտելիս:**
- Գրեթե **բոլոր ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ հակված են թաքցնել իրենց կարգավիճակը այլ մարդկանցից:**
- ՄԻԱՎ-ով ապրող **մարդկանց 64%-ը որոշել է անցնել թեստավորում վեց ամսում կամ ավելի պակաս** ժամանակում այն պահից սկսած, երբ առաջին անգամ այդ միտքը ծագել է իրենց մոտ:
- **ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց 82.5%-ը նշել է, որ իրենք բաց չեն թողել ՀՌՎ բուժումը** վախի պատճառով, որ ինչ-որ մեկը կիմանա իրենց կարգավիճակի մասին: Միջինում **յուրաքանչյուր չորրորդ ՄԻԱՎ-ով ապրող մարդ ընդհատել է բուժումը ՄԻԱՎ կարգավիճակի վերաբերյալ որևէ բան անելու պատրաստակամության բացակայության պատճառով,** մինչդեռ կանանց և ԿՍ-ների մոտ այս պատճառը վերաբերելի է մոտավորապես մեկ երրորդին:
- Ըստ **ԿՍ-ների 4.3%-ի՝ բժշկական անձնակազմը խուսափել է նրանց հետ ֆիզիկական շփումից և լրացուցիչ նախազգուշական միջոցներ է ձեռնարկել նրանց ՄԻԱՎ դրական կարգավիճակով պայմանավորված** և սա այն դեպքում, երբ ԿՍ-ների 75%-ը չի հայտնել իր կարգավիճակի մասին ընդհանուր բժշկական ծառայությունների դիմելիս, որտեղ նրանք ստանում են ՀՌՎ բուժում:
- **ՏԳ-ների կեսից ավելին հայտնել է, որ դուրս են մնացել ընտանեկան միջոցառումներից և ենթարկվել են ոտնձգությունների ու ֆիզիկական բռնության՝ իրենց գենդերային նույնականացման պատճառով**: Բացի այդ, ՏԳ-ները հակված չեն բացահայտելու իրենց գենդերային նույնականացումը իրենց բժշկական փաստաթղթերում:
- Այն փաստը, որ **բոլոր ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ ցանկանում են թաքցնել իրենց կարգավիճակը և սեռական կողմնորոշումը** մյուսներից, **փաստում է նրանց վստահության ցածր մակարդակի մասին իրենց անմիջական միջավայրի, առողջապահական համակարգի, սոցիալական ծառայությունների և, ընդհանուր առմամբ, ողջ հասարակության նկատմամբ:** Սա վկայում է սոցիալական և վարքագծային փոփոխության գործողությունների շարունակական, նպատակային միջոցառումների իրականացման անհրաժեշտության մասին, որոնք ակնհայտորեն չպետք է սահմանափակվեն միայն իրազեկման արշավներով:

Այսպիսով՝ իրականացված հետազոտության հիմնական արդյունքների հաշվառմամբ և ադվոկացիոն աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով անհրաժեշտ է առաջ քաշել **հետևյալ գործնական առաջարկություններն**՝ ուղղված ՀՀ կառավարությանը և նախարարություններին (ԱՆ, ԱրՆ, ԱՍՀՆ, ԿԳՄՍ), ԻՀԱԿ-ին, տեղական և միջազգային ՀԿ-ներին, ինչպես նաև ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց Կենտրոնական Ասիայի ցանցին:

ԱՆԴՐԱԴԱՐՁ ԻՐԱՎԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻՆ (առաջարկություններ՝ ուղղված կառավարությանը, տեղական և միջազգային ՀԿ-ներին)

Անհրաժեշտ է հնարավորինս շուտ նախաձեռնել քաղաքական երկխոսություն ՄԻԱՎ վարակի ապաքրեականացման, ինչպես նաև դրանից բխող այլ քաղաքականություններին առնչվող սահմանափակումների շուրջ, որոնք հանգեցնում են ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց իրավունքների ոտնահարմանը: Բաց երկխոսությունը պետք է ընդգրկի մարդու իրավունքներին առնչվող գործող քաղաքականության հետևանքների ապացույցները և ավարտվի բոլոր շահագրգիռ կողմերի հետ սերտ համագործակցությամբ՝ մշակված այլընտրանքային քաղաքականության տարբերակներով: Կանանց և առանցքային համախմբությունների ներկայացուցիչների նկատմամբ խարանի և խտրականության բարձր խոցելիության թեման պետք է ներառվի քաղաքականության օրակարգում՝ ընդգրկելով բոլոր ոլորտները (կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն, զբաղվածություն, արդարադատություն) և պետք է լուծվի համակարգված կերպով՝ հաշվի առնելով անհրաժեշտ օրենսդրական, ծրագրային, վարչական և ֆինանսական կարգավորումները:

ԶՈՐԵՂԱՑՈՒՄ՝ ԸՆԴԴԵՄ ՆԵՐՔԻՆ ԽԱՐԱՆԻ (առաջարկություններ՝ ուղղված կառավարությանը, տեղական և միջազգային ՀԿ-ներին, ԻՀԱԿ-ին)

Հաշվի առնելով մշտապես ուղեկցվող ներքին խարանը, ինչպես նաև ՄԻԱՎ-ի խնամքի, բուժման և թեստավորման մատչելիությունը, կարևոր է բարձրացնել որակյալ սոցիալական (ոչ բժշկական) ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունը ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հոգեկան, սոցիալական և տնտեսական խնդիրների լուծման նպատակով, մասնավորապես՝ կանանց և առանցքային համախմբությունների ներկայացուցիչների շրջանում: ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց (սոցիալական և տնտեսական) զորեղացման հաջողված պրակտիկան, որը դրսևորվել է այլ երկրներում, պետք է հետագա գնահատում և ընդլայնում ստանա՝ հաշվի առնելով սոցիալական պաշտպանության մեխանիզմների միջոցով դրանց հետագա ինստիտուցիոնալացումը:

Անհրաժեշտ է տեղական մակարդակով գնահատել միջգերատեսչական համակարգման մեխանիզմների արդյունավետությունը՝ ուղղված ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց խոցելիության հիմնահարցերի լուծմանը, և բացահայտել այդ մեխանիզմներում առկա բացերը՝ առաջարկելու նոր, գործառույթային տարբերակներ, որոնք առավելագույնի կհասցնեն առկա ռեսուրսների օգտագործումը, առողջապահության, սոցիալական պաշտպանության, զբաղվածության և կրթության ծառայությունների, քաղաքացիական հասարակության և այլ կազմակերպությունների գործունեության ոլորտներում ջանքերի համակարգումը՝ ապահովելով ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց համար նախատեսված ծրագրերի արդյունավետությունը:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ (առաջարկություններ՝ ուղղված կառավարությանը, ԻՀԱԿ-ին, տեղական և միջազգային ՀԿ-ներին)

Ամրապնդել ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և շահագրգիռ կողմերի (բժշկական, սոցիալական և կրթական ոլորտի աշխատուժ, իրավապահ մարմինների ներկայացուցիչներ և այլն) իրավական գրագիտությունը և ապահովել, որպեսզի ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ, մասնավորապես՝ կանայք և առանցքային համախմբության ներկայացուցիչները, ժամանակին ունենան որակյալ իրավական աջակցության հասանելիություն: Նման աջակցություն ներկայումս գործում է, սակայն այն հիմնականում իրավաբանական խորհրդատվության տեսքով է: Անհրաժեշտ է տրամադրել համապատասխան իրավական աջակցություն, մասնավորապես՝ փաստաթղթերի պատրաստման և ներկայացման հարցում:

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀԱՄԱԽՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ ԵՎ ՄԻԱՎ-ՈՎ ԱՊՐՈՂ ԿԱՆԱՅՔ (առաջարկություններ՝ ուղղված կառավարությանը, ԻՀԱԿ-ին, տեղական և միջազգային ՀԿ-ներին)

Աջակցել ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց համայնքի ստեղծմանը, ներառելով «հավասարը՝ հավասարին» խորհրդատուներին և այլ պրակտիկ մասնագետներին, վերջիններիս փորձի փոխանակմանը, լավագույն փորձառության տարածմանը և մասնագիտական զարգացմանը խթանելու նպատակով:

Համոզվել, որ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց սպասարկող բժշկական անձնակազմը շարունակաբար վերապատրաստվում և պահպանում է էթիկական և գաղտնիության կանոնները:

ՇԱՀԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԻ ՄՇԱԿՈՒՄ՝ ԸՆԴԴԵՄ ՄԻԱՎ-ՈՎ ԱՊՐՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԽԱՐԱՆԻ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ (առաջարկություններ՝ ուղղված կառավարությանը, ԻՀԱԿ-ին, տեղական և միջազգային ՀԿ-ներին)

Բոլոր շահագրգիռ կողմերի հետ համատեղ մշակել և իրականացնել շահերի պաշտպանության ծրագիր՝ ի պատասխան այս հետազոտության արդյունքների: ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ պետք է ներգրավվեն համանման ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման գործընթացներում: Առաջարկվում է սույն հետազոտության արդյունքների և բացահայտումների հիման վրա մշակել հատուկ միջոցառումներ և համապատասխան ցուցանիշներ, որոնք կնպաստեն ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի 2022-2026 թվականների ազգային ծրագրի իրականացմանը:

ՀԱՎԱՔԱԳՐՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ ՀԵՏԱԳԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ (առաջարկություններ՝ ուղղված տեղական և միջազգային ՀԿ-ներին, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց Կենտրոնական Ասիայի ցանցին)

ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ինդեքս 2.0 հետազոտության տվյալների բազան կարող է օգտագործվել հիմք հետագա հետազոտությունների համար՝ որոշակի խմբերի կամ համատեքստերի հետ կապված կոնկրետ ուսումնասիրության հարցերի լուծման նպատակով: Օրինակ, հետագա հետազոտությունները կարող են դիտարկել զբաղվածության կարգավիճակի և ներքին խարանի կամ հանրության վերաբերմունքի միջև փոխհարաբերությունները: Հետաքրքիր կլիներ փոփոխականների միջև փոխհարաբերությունները դիտարկել նաև գենդերային տեսանկյունից: Հաշվի առնելով, որ խարանն ու խտրականությունը հատկապես ազդում են կանանց և առանցքային համախմբությունների ներկայացուցիչների վրա, հետագա ուսումնասիրությունները կարող են լույս սփռել նման վարքագիծը պայմանավորող գործոնների բացահայտման վրա:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս զեկույցն արտացոլում է Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ինդեքս 2.0 հետազոտության արդյունքները: Հետազոտության նպատակն էր հավաքագրել տվյալներ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և թիրախային խմբերի նկատմամբ խարանի, խտրականության և իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ, ինչպես նաև օգտագործել հետազոտության արդյունքները որպես գործիք տեղական, ազգային և գլոբալ մակարդակներում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց իրավունքների պաշտպանության համար: Հատկանշական է, որ ՄԻԱՎ-ի նկատմամբ խարանը և խտրականությունը հիմնական խոչընդոտներն են ՄԻԱՎ-ով ապրող անձանց հիվանդության կանխարգելման, բուժման և աջակցության հասանելիության հարցում: ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց իրավունքները և շահերը պաշտպանելու համար շատ կարևոր է ունենալ տեղեկատվություն, որը պատկերացում է տալիս իրական վիճակի մասին. ի՞նչ դժվարությունների են հանդիպում մարդիկ և ինչպե՞ս է դա ազդում նրանց կյանքի վրա:

Նման տեղեկատվություն ստանալու համար դեռևս 2005 թվականին սկսվել է տվյալների հավաքագրման մի նախաձեռնություն՝ աշխարհի տարբեր երկրներում խարանի և խտրականության մակարդակն ուսումնասիրելու նպատակով (www.stigmaindex.org): Նախաձեռնողները եղել են միջազգային կազմակերպություններ, որոնք զբաղվում էին ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շահերի պաշտպանությամբ՝ Պլանավորված Ծնողավարության Միջազգային Ֆեդերացիան (International Planned Parenthood Federation (IPPF)), ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող մարդկանց գլոբալ ցանցը (GNP+), ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող կանանց միջազգային համայնքը (ICW) և ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համատեղ ծրագիրը (UNAIDS): Այսպիսով, այն «ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ինդեքս» խորագրով համաշխարհային հետազոտության ձևավորումն էր, որը մշակվել էր ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց կողմից և ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց համար:

Ընդհանուր առմամբ, հետազոտության նպատակն է փաստագրել ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց տարբեր փորձառությունները՝ կապված խարանի, խտրականության և նրանց իրավունքների ոտնահարման հետ: Կարևոր է հիշատակել, որ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ինդեքս հետազոտությունը նախագծվել և հատկապես իրականացվում է ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց կողմից՝ հաշվի առնել հետազոտության էթիկական կողմերը: Մյուս կողմից, այն թույլ է տալիս ավելի խորը պատկերացում կազմել համատեքստի և խարանի ու խտրականության ենթարկվելու նրանց փորձառության մասին՝ միաժամանակ ծառայելով որպես ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց համար կարողությունների զարգացման ռազմավարություն:

2008 թվականից ի վեր՝ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ինդեքսը, հայեցակարգի մշակման փուլից անցում կատարելով ընդլայնման փուլի, կիրառվել է տարբեր խմբերի կողմից բազմաթիվ համայնքներում, երկրներում և մայրցամաքներում: Մինչև 2017 թվականի հոկտեմբեր ամիսը ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ինդեքսը թարգմանվել է 54 լեզուներով, 90 երկրներում ՄԻԱՎ-ով ապրող ավելի քան 100,000 մարդկանց հետ հարցում է իրականացվել, և ՄԻԱՎ-ով ապրող ավելի քան 2000 մարդ մասնակցել է հարցազրուցավար դառնալու հրահանգավորման դասընթացներին: **Կարևոր է հատկանշել, որ խարանի ինդեքս հետազոտությունը ՀՀ-ում նախկինում երբեք չի իրականացվել:**

2018 թվականին Միջազգային գործընկերությունը (ICW, UNAIDS և GNP+՝ Ջոնս Հոփկինսի համալսարանի աջակցությամբ) ընդունել է ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ինդեքսի մեթոդաբանության նոր տարբերակը (տարբերակ 2.0), որն ավելի լայն ուշադրություն է դարձնում փոխհատվածության վրա և ավելի մանրամասնորեն է կենտրոնանում առանցքային համախմբությունների ներկայացուցիչների նկատմամբ խարանի վրա՝ հատկապես առողջապահության ոլորտում: ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ինդեքսի մեթոդաբանության վերանայումը հիմնված է եղել մի շարք գործոնների համադրության վրա, ներառյալ՝ ՄԻԱՎ-ի համաճարակի տեղաշարժերը, ՄԻԱՎ-ով պայմանավորված խարանի վերաբերյալ առկա ապացույցների աճը, մասնավորապես, այն մարդկանց շրջանում, ովքեր նոր են համալրում թիրախային խմբերը, և ՄԻԱՎ-ի նկատմամբ գլոբալ արձագանքի փոփոխությունները (թեսթավորման և բուժման սկսման ռազմավարություն): Այս մեթոդաբանության վերանայումը հիմնավորվել է նաև ընտրանքի մեթոդների ձևայնացման ապահովման, ՄԻԱՎ-ի բոլոր համախմբությունների ընդգրկման, առողջապահական համակարգի կարգավորումների ազդեցության ընդլայնման և թվային տեխնոլոգիաների կիրառման ապահովման անհրաժեշտությամբ:

Հայաստանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման գործընթացը մեկնարկել է 1990-ականներին, երբ երկրում սկսեցին արձանագրվել ՄԻԱՎ վարակի դեպքեր: Այդ ժամանակից ի վեր՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային ծրագիրը մշտապես զարգացել է, ընդլայնվել են ծրագրերի և ծառայությունների շրջանակներն ու ծածկույթը՝ ապահովելով իրականացվող միջոցառումների փաստական տվյալներով հիմնավորվածությունը և համապատասխանությունն այն անձանց կարիքներին, որոնք գտնվում են ՄԻԱՎ վարակի փոխանցման առավել ռիսկային խմբերում և/կամ ունեն կանխարգելման, բուժման և խնամքի ծառայությունների կարիք[3]: 2021թ. հունիսի 30-ի դրությամբ՝ համաճարակի 33 տարիների ընթացքում, ՀՀ-ում պաշտոնապես գրանցվել է ՄԻԱՎ վարակի 4366 (3029 դեպք տղամարդկանց և 1337 դեպք կանանց շրջանում) և ՁԻԱՀ-ի 2128 դեպք[4]: Արձանագրված մահվան դեպքերի թիվը 989 է: 2021թ.-ի առաջին կեսին ՀՀ քաղաքացիների շրջանում գրանցվել է ՄԻԱՎ վարակի 196 դեպք: Համաճարակի առաջին տարիներին ՄԻԱՎ վարակի փոխանցման բոլոր նոր դեպքերի երկու երրորդը պայմանավորված էր թմրամիջոցների ներերակային օգտագործողների շրջանում ոչ անվտանգ ներարկումներով, մեկ երրորդը՝ հետերոսեքսուալ ճանապարհով վարակի փոխանցմամբ: Ինչևէ, 2005թ.-ից ի վեր, հետերոսեքսուալ ճանապարհը դարձել է վարակի փոխանցման հիմնական ուղին: Միևնույն ժամանակ, թմրամիջոցների ներերակային օգտագործմամբ պայմանավորված ՄԻԱՎ վարակի փոխանցման դեպքերի համամասնությունը կտրուկ նվազել է՝ 2019թ.-ին կազմելով ընդամենը 7.6%[5]:

2010-2020թթ. ժամանակահատվածում ՄԻԱՎ վարակի նոր գրանցված դեպքերի բաշխման վերաբերյալ տվյալներն՝ ըստ փոխանցման ուղիների, ցույց են տալիս հետերոսեքսուալ ճանապարհով ՄԻԱՎ վարակի փոխանցման համամասնության հետևողական աճի հստակ միտում՝ 2010թ.-ին 59.5%-ից մինչև 81.6% 2020թ.-ին: Նույն ժամանակահատվածում թմրամիջոցների ներերակային օգտագործումը, որպես փոխանցման ուղի, կայուն կերպով նվազել է՝ 2010թ.-ին մեկ երրորդից (33.8%) հասնելով ընդամենը 5.7%-ի 2020թ.-ին: Նշանակալիորեն մեծացել է հոմո/բիսեքսուալ ճանապարհով

[3] Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման 2022-2026 թթ. միջոցառումների ծրագիր, ՀՀ առողջապահության նախարարություն
[4] ԻՀԱԿ տվյալներ, սեպտեմբերի 9, 2021թ.
[5] Տես[1]

ՄԻԱՎ վարակի փոխանցման համամասնությունը՝ 2010թ.-ին ընդամենը մեկ դեպքից (0.7%) հասնելով 49 դեպքի (10.9%) 2019թ.-ին և 34 դեպքի (9.2%) 2020թ.-ին[6]:

Համաձայն ԻՀԱԿ-ի տրամադրած տեղեկատվության՝ 2022 թվականի հուլիս ամսվա դրությամբ Հայաստանում գրանցվել է 3277 ՄԻԱՎ վարակակիր (18 և բարձր տարիքի): Շուրջ 89%-ը ստանալիս է եղել ՀՈՎ բուժում (n=2917), գրանցված ՄԻԱՎ վարակակիրների 33%-ը (n=1091) կանայք են, որոնցից 1004-ը կամ 92%-ը ստանալիս է եղել ՀՈՎ բուժում, իսկ առանցքային համախմբությունը կազմում է գրանցվածների 41.4%-ը:

2022-2026թթ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային ծրագիրը ներկա և նախկին ազգային ծրագրերի շարունակությունն է այն առումով, որ ուղղված է ծառայությունների մատուցման (կանխարգելում, հետազոտում, բուժում) հետ կապված մշտապես առաջացող հիմնական առաջնահերթ մարտահրավերների լուծմանը և սոցիալական, իրավական ու քաղաքականության միջավայրերի ձևավորմանը: Մյուս կողմից, նոր ազգային ծրագրի նպատակն է նաև ընդլայնել ծրագրերը և ծառայությունները՝ նոր ի հայտ եկող մարտահրավերները լուծելու կամ նորարարական մոտեցումներ ներդնելու կամ խթանելու համար, ինչպիսիք են՝ նախակոնտակտային կանխարգելումը, ՄԻԱՎ վարակի վերաբերյալ ինքնուրույն կատարվող հետազոտությունները, տրանսգենդեր անձանց համար նախատեսված ծառայությունները կամ նորարարական մոտեցումները նոր կորոնավիրուսային հիվանդության համավարակի մարտահրավերների առնչությամբ[7]:

ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ինդեքսը լայնորեն ճանաչված է ազգային և միջազգային մակարդակներում՝ որպես ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանն ու խտրականությունը գնահատելու և դրանց արձագանքելու առաջնային գործիք:

Հետազոտության բուն նպատակն է հավաքագրել տվյալներ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և առանցքային համախմբությունների ներկայացուցիչների նկատմամբ խարանի, խտրականության և իրավունքների ոտնահարման դեպքերի վերաբերյալ, ինչպես նաև օգտագործել հետազոտության արդյունքները որպես գործիք տեղական, ազգային և գլոբալ մակարդակներում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց իրավունքների պաշտպանության համար:

ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց վերաբերյալ սույն հետազոտությունը նպաստում է հետևյալին.

1. ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հետազոտական կարողությունների ամրապնդում՝ իրազեկության բարձրացում, ուսուցում և համագործակցության խթանում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ինդեքս 2.0 հետազոտության արդյունքները վերլուծելու հարցում, ինչպես նաև քանակական հետազոտության մեթոդների ուսուցում և լայն շրջանակում արդյունքների քննարկում և հանրայնացում (քաղաքականություն մշակողներ և պետական պաշտոնյաներ, գործընկերներ տարբեր ցանցերում, ՄԻԱՎ-ով ապրող անձինք, առողջապահական ծառայություններ մատուցողներ և ՔՀԿ-ներ):
2. Միջազգային նախագծի համատեքստում հաշվետվողականության, տվյալների հավաքագրման, վերլուծության և հաղորդակցման համակարգերի մշակում. այս պարագայում հիմք են ընդունվում միջազգային գործընկերության կողմից ստեղծված համակարգերը, որոնք

[6] Տես[3]
[7] Տես[1]

ուղղված են ապահովելու հետազոտության տվյալների և բացահայտումների արդյունավետ կառավարումը տվյալ երկրում խարանի ինդեքսը կիրառելիս:

3. Շահերի պաշտպանության խթանում և ռեսուրսների մոբիլիզացիայի ավելացում. ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ինդեքս 2.0-ի ներդրման ապացույցներն ու արդյունքները կուժեղացնեն ջանքերը՝ մոբիլիզացնելու լրացուցիչ ռեսուրսներ հետագայում այլ երկրներում ևս ներդնելու, ինչպես նաև հետազոտական գործունեություն ծավալելու համար: Դա նաև կբարձրացնի խարանի ինդեքսի վերաբերյալ իրազեկվածությունը ՄԻԱՎ-ի և առողջապահության ոլորտում գործող բոլոր ազգային շահագրգիռ կողմերի և ցանցերի միջև:
4. Տեղեկատվությամբ լի հանրային բանավեճ և մարդու իրավունքների վերաբերյալ արշավներ՝ հիմնված ապացույցների վրա: Հիմնվելով հետազոտության արդյունքների, ինչպես նաև ներգրավված հիմնական գործընկերությունների վրա՝ քարոզարշավը կօգտագործի հաղորդակցման նորարարական մոտեցումներ՝ ներգրավելու քաղաքականություն և օրենսդրություն մշակողներին, ինչպես նաև աջակցելու մարդու իրավունքների պաշտպանությանը նպաստելու ջանքերին:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Հատկանշական է, որ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ինդեքսի հետազոտությունը հատուկ նախագծվել և իրականացվում է ՄԻԱՎ-ով ապրող անձանց կողմից՝ այդպիսով թույլ տալով հաշվի առնել հետազոտության էթիկական կողմերը: Խարանի ինդեքսի հետազոտությունն իրականացվել է 2015 թվականին և դարձել լայնածավալ ուսումնասիրություն Կենտրոնական Ասիայի երեք երկրներում (Ղազախստան, Ղրղզստան և Տաջիկստան): Այն սահմանել է ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց խմբերը մարզերում, բացահայտել է խարանի, խտրականության և իրավունքների ոտնահարման հիմնական ռիսկային կետերը և, ըստ էության, ուրվագծել է համապատասխան հեռանկարային ոլորտները ծրագրերի մշակման համար: **Կարևոր է հատկանշել, որ խարանի ինդեքս հետազոտությունը ՀՀ-ում նախկինում երբեք չի իրականացվել:**

ՄԻԱՎ-ի նկատմամբ խարանի և խտրականության հիմնահարցը, որը ձևավորում է ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց զուգընկերների և նրանց անմիջական սոցիալական միջավայրի, ինչպես նաև առողջապահական հաստատությունների աշխատակիցների կողմից, արժանի է լուրջ ուշադրության: Հատուկ աջակցություն է պահանջվում այն մարդկանց համար, ովքեր ՄԻԱՎ-ով ապրում են 4 տարուց պակաս: Առավել խարանված և խտրականության են ենթարկվում ՄԻԱՎ-ով ապրող այն մարդիկ, որոնք ԹՕ-ներ են, ԿՍԿ, SUS և ԿՍ են: Այս խմբերի ներկայացուցիչները շարունակում են մնալ ծայրահեղ խոցելի՝ խտրականության, բռնության և չարաշահումների, իրավունքների ոտնահարման տարբեր ձևերի առումով ինչպես իրենց ընտանիքներում, այնպես էլ համայնքներում և այլուր:

Խարանն ու խտրականությունը անհամաչափորեն ազդում են կանանց և աղջիկների վրա: Կանայք սովորաբար ավելի շատ են խարանի և խտրականության ենթարկվում, քան տղամարդիկ, ավելի հավանական է, որ արժանանան խարանի և խտրականության դաժան և խիստ զրպարտիչ եղանակով: Կանայք և աղջիկները հայտնում են իրենց զուգընկերների կողմից ավելացող բռնության դեպքերի մասին՝ ի պատասխան պահպանակների օգտագործման, կամավոր խորհրդատվության և թեստավորման ծառայությունների դիմելու, սեռական հարաբերություններից հրաժարվելու կամ ՄԻԱՎ-ի թեստի դրական արդյունք ունենալու:

Սոցիալապես անապահով խմբերում առկա է հետևանքների սրացում: Խարանն ու խտրականությունը ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և ՄԻԱՎ վարակի նկատմամբ խոցելի խմբերի համար ամենօրյա իրականություն են: Այս խմբերը ներառում են ԿՍ-ներին, SUS-ներին, ԿՍԿ-ներին, ԹՕ-ներին, և ՏԳ-ներին: Այս խմբերն արդեն իսկ խարանված են իրենց ինքնության, զբաղմունքի կամ վարքագծի նկատմամբ նախապաշարմունքների պատճառով և ավելի հավանական է, որ բախվեն ավելի շատ խտրականության, քան մյուս մարդիկ, եթե նրանց մոտ ախտորոշվի ՄԻԱՎ, մասնավորապես, նրանց կարող են մերժել անհրաժեշտ բժշկական ծառայություններ մատուցելու հարցում: Այս խմբերի մարդկանց հանդեպ դրսևորվող շերտավորված խարանի պատճառով ՄԻԱՎ-ի նկատմամբ նրանց կարիքների բավարարումը դառնում է առավել հրատապ: Հաճախ այդ խմբերի ներկայացուցիչները չեն փնտրում անհրաժեշտ ծառայություններ կամ հետաձգում են դրանք՝ վախենալով բացահայտվելուց, նվաստանալուց և/կամ բուժաշխատողների վերաբերմունքի փոփոխությունից, իսկ որոշ դեպքերում՝ վախենալով հետապնդումից և ազատազրկումից:

2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտության մեթոդաբանությունը հիմնված է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող մարդկանց գլոբալ ցանցի (GNP+), ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող կանանց միջազգային համայնքի (ICW) և ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերի համատեղ ծրագրի (UNAIDS) կողմից մշակված և առաջարկված մեթոդի վրա:

ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ինդեքս 2.0 հետազոտությունն իրականացվել է ոչ փորձարարական, նկարագրողական մոտեցմամբ՝ քանակական հետազոտության մեթոդի կիրառմամբ: Թիրախային խմբերի ներկայացուցչական ընտրանքով հետազոտության համար ձևայնացված հարցաթերթի կիրառումը նպաստել է երևույթների ավելի խորը և համապարփակ ընկալման զարգացմանը ինչպես ազգային, այնպես էլ գլոբալ մակարդակներում, լիահույս լինելով, որ հետագայում կնպաստի ՄԻԱՎ-ի վերահսկման և կանխարգելման ծառայությունների որակն ու մատչելիությունը բարելավելու միջոցառումների փաթեթի մշակմանը:

<u>Նպատակ</u>

Հետազոտության նպատակն է հավաքագրել տվյալներ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և թիրախային խմբերի նկատմամբ խարանի, խտրականության և իրավունքների ոտնահարման դեպքերի վերաբերյալ, ինչպես նաև օգտագործել հետազոտության արդյունքները որպես գործիք տեղական, ազգային և գլոբալ մակարդակներում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց իրավունքների պաշտպանության համար:

<u>Խնդիրներ</u>

1. Ուսումնասիրել ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հիմնախնդիրները՝ կապված ՄԻԱՎ-ի նկատմամբ խարանի և խտրականության հետ, որոնց նրանք բախվում են իրենց համայնքում, միջավայրում (աշխատավայր, առողջապահական հաստատություն, ընտանիք և այլն) կամ որևէ հաստատությունում:
2. Ուսումնասիրել ՄԻԱՎ-ի թեստավորման, բուժման և այլ ծառայությունների հասանելիության վրա ազդող գործոնները, ինչպես նաև ՄԻԱՎ-ի կարգավիճակից զատ դրսևորվող խարանի ու խտրականության այլ հիմքերը, օրինակ՝ կոմերցիոն սեռական ծառայության տրամադրում, թմրամիջոցների օգտագործում, սեռական կողմնորոշում կամ գենդերային նույնականացում:
3. Ներկայացնել առաջարկություններ և մշակել լուծումներ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի և խտրականության դեմ պայքարելու համար անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու նպատակով, ինչպես նաև ներկայացնել ապացույցներ՝ ուղղված ՀՀ-ում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և թիրախային խմբերի համար համապատասխան քաղաքականության մշակմանն ու ծրագրերի բարելավմանը:

2.1 Հետազոտության աշխարհագրական ծածկույթ

Հետազոտության համար ընտրվել են ՄԻԱՎ-ի ամենաբարձր և միջին մակարդակի տարածվածություն ունեցող բնակավայրերը (գյուղական և քաղաքային)՝ ներառելով ՀՀ երեք մարզերը՝ Երևան, Լոռի և Շիրակ:

Ինչպես առաջարկվում է ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ինդեքս 2.0 հետազոտության մեթոդաբանական ուղեցույցում, ենթազգային վարչական միավորները կամ բնակավայրերը ընտրվել են՝ հաշվի առնելով հանրապետության մասշտաբով ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց 50%-ի շրջանակը: ԻՀԱԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա որոշվել է հետազոտությունն իրականացնել երեք բնակավայրերում: Ստորև բերված աղյուսակ 1-ը տեղեկատվություն է տրամադրում 18 և բարձր տարիք բնակչության ընդհանուր թվի մասին՝ ըստ բնակավայրերի:

Աղյուսակ 1. Երկրի բնակչությունն ըստ մարզերի[8] և ընտրված բնակավայրերի

Բնակավայրի անվանումը	Բնակչության թավաքանակը	Բնակչության համամասնությունը
1. Երևան	873,360	70.3%
2. Լոռու մարզ	173,682	13.9%
2.1 Վանաձոր խոշորացված համայնք	65,862	5.3%
3. Շիրակի մարզ	194,560	15.6%
3.1 Գյումրի խոշորացված համայնք	94,171	7.6%
Ընդամենը բնակչություն	**1,241,602**	

Համաձայն ԻՀԱԿ-ի տրամադրած տեղեկատվության՝ 2022 թվականի հուլիս ամսվա դրությամբ Հայաստանում գրանցվել է 3277 ՄԻԱՎ վարակակիր (18 և բարձր տարիքի): Շուրջ 89%-ը ստանում է ՀՈՎ բուժում (n=2917), գրանցված ՄԻԱՎ վարակակիրների 33%-ը (n=1091) կանայք են, որոնցից 1004-ը կամ 92%-ը ստանում է ՀՈՎ բուժում, իսկ առանցքային համախմբության ներկայացուցիչները կազմում են գրանցվածների 41.4%-ը[9]:

2.2 Հետազոտության մասնակիցներ

Ընտրանք

Հետազոտությունն իրականացվել է հավանական և ոչ հավանական ընտրանքի տեխնիկաների համակցման մեթոդով: Գլխավոր համախմբությունը կազմել են ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ, ներառյալ առանցքային համախմբության (ԹՕ, ԿՍ, SUS, ՏԳ) և խոցելի համախմբության (ԿՍԿ, բիսեքսուալներ) ներկայացուցիչները: Ընտրանքի չափը հաշվարկվել է ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ինդեքս 2.0 հետազոտության համար մշակված ընտրանքի ծավալի հաշվիչի միջոցով[10]:

Ելնելով վերոնշյալ գործիքի միջոցով ընտրանքի ծավալը հաշվարկելու առաջարկված մեթոդաբանությունից՝ օգտագործվել են հետևյալ պարամետրերը.

1. ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց կողմից առողջապահական ծառայություններից խուսափելու տարածվածությունը գնահատվել է 33%:

[8] Աղբյուր՝ ՀՀ Վիճակագրական Կոմիտե, «Մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2021թ.», www.armestat.am
[9] ԻՀԱԿ տվյալներ, օգոստոսի 25, 2022թ.
[10] Աղբյուր՝ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ինդեքս 2.0., Ընտրանքի վերաբերյալ ուղեցույց, Ընտրանքի հաշվիչ, https://hall.shinyapps.io/PLHIV_Stigma_Sample_Size_Calculator/

2. Թիրախի ճշգրտությունը գնահատվել է 8%:

Օգտագործելով վերը նշված պարամետրերը և առցանց հաշվիչը, ինչպես նաև հաշվի առնելով նախորդ հետազոտություններից հրաժարվելու ցուցանիշը՝ ընտրանքի վերջնական ծավալը սահմանվել է 531 միավոր՝ նկատի ունենալով առանցքային համախմբության ներկայացվածությունը առնվազն 25%-ով (իրականում՝ 23.5%), կանանց ներկայացվածությունը առնվազն 30%-ով (իրականում՝ 31.3%), խնամքի կամ բուժման մեջ չգտնվողներինը՝ առնվազն 20%-ով (իրականում 1%) և աշխարհագրական ծածկույթը երկրի 3 մարզերի ընդգրկվածությամբ:

Ընտրանքի բաշխվածությունը տեղամասերում (3 մարզերում) համաչափ է եղել, մինչդեռ յուրաքանչյուր այն վայրում, որտեղ օգտագործվել է առանցքային համախմբության ներկայացուցիչների վիճակագրորեն նշանակալի քանակություն, ընտրանքի բաշխվածությունը սահմանափակվել է 50 միավորի շրջանակում: Այն դեպքում, երբ առանցքային համախմբության ներկայացուցիչների ընդհանուր թիվը 50-ից ցածր է եղել, հետազոտությունը տվյալ վայրից ընդգրկել է մասնակիցներ գլխավոր համախմբությունից:

Համաձայն ԻՀԱԿ-ի տվյալների՝ 2022 թվականի հուլիսի դրությամբ Հայաստանում գրանցվել է 18 տարեկանից բարձր 3277 ՄԻԱՎ-ով ապրող մարդ: Շուրջ 89%-ը եղել է ՀՈՎ ստանալիս (n=2917), գրանցված ՄԻԱՎ-ով ապրողների մոտ 33%-ը (n=1091) եղել են կանայք, որոնցից 1004-ը կամ 92%-ը եղել են ՀՈՎ բուժում ստացողներ:

Աղյուսակ 2. Ընտրանքի ծավալում ակնկալվող մասնակիցների պլանավորված բաշխումը

Համախմբություն	Պլանավորված հարցազրույցների թիվ	Իրականացված հարցազրույցների թիվ
Առանցքային համախմբություն	n = 133 (ընտրանքի առնվազն 25%-ը)	n = 125 (23.5%)
Կանայք	n = 160 (սահմանել թիրախ՝ 30%)	n = 166 (31.3%)
Խնամքից դուրս գտնվող ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ	n = 106 (սահմանել թիրախ՝ 20%)	n = 5 (0.9%)

Մասնակցության չափանիշներ

- ✓ 18-ից բարձր տարիքի անձ,
- ✓ իր ՄԻԱՎ կարգավիճակի մասին առնվազն 12 ամիս վաղեմության իմացություն,
- ✓ ՄԻԱՎ-ով ապրող առանցքային համախմբության ներկայացուցիչ,
- ✓ հարցմանը մասնակցելու համար գրավոր համաձայնություն ներկայացրած անձ, ում հասկանալի են հետազոտության մանրամասները,
- ✓ խոսում է հայերեն:

Բացառման չափանիշներ

- ✓ 18 տարեկանից ցածր տարիքի անձ,
- ✓ ՄԻԱՎ-ով ապրող կալանավոր,
- ✓ ֆիզիկական և (կամ) մտավոր հաշմանդամություն, որն ազդում է հետազոտությանը նրանց մասնակցության վրա (հարցերը հասկանալու և պատասխանելու դժվարություններ, այլ սահմանափակումներ),
- ✓ հարցմանը մասնակցելուց կամ համաձայնության թերթիկը ստորագրելուց հրաժարվածներ,

- ✓ ընթացիկ հետազոտությանն արդեն իսկ մասնակցածներ,
- ✓ առանցքային և խոցելի համախմբությունների ներկայացուցիչներ, ովքեր չունեն ՄԻԱՎ:

<u>Հավաքագրում</u>

Հարցվածները հավաքագրվել են՝ ըստ ձևայնացված մեթոդաբանության և ընտրանքային երկու մեթոդների կիրառման:

Վայրի վրա հիմնված ընտրանքային մոտեցման կիրառում. Բոլոր ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ, ովքեր համապատասխանել են ընտրանքի չափանիշներին և ընտրվել են ցանկից՝ օգտագործելով պատահական թվեր, դիսպանսեր բժիշկը կապ է հաստատել և առաջարկել է մասնակցել հարցմանը՝ նախապես գրված տեքստի միջոցով: Բոլոր հարցվածները, ովքեր համաձայնել են մասնակցել հետազոտությանը, տեղեկացվել են ուսումնասիրության նպատակների և խնդիրների մասին: Նրանց հետ հարցազրույց է անցկացվել իրենց գրավոր իրազեկված համաձայնությունը ստանալուց հետո: Հետազոտության մասնակիցները հիմնականում նախընտրել են հարցազրույցներին մասնակցել ՀԿ-ների տարածքներում: Հարցվածներից ոմանք նախընտրել են հանդիպել իրենց տներում կամ իրենց հետ աշխատող համայնքային կազմակերպությունների գրասենյակներում: Հարկ է նշել, որ ԻՀԱԿ-ը ծրագրի ողջ ընթացքում իր նվիրումն է ցուցաբերել՝ ուղղված ծրագրի նպատակի իրագործմանը, և իր աջակցությունը՝ հետազոտական թիմին:

Սահմանափակ շղթայական ուղղորդման տեխնիկան կիրառվել է ՄԻԱՎ-ով ապրող այն մարդկանց հավաքագրելու համար, որոնք ներգրավված չեն եղել բուժման կամ խնամքի գործընթացում, ինչպես նաև առանցքային և խոցելի համախմբությունների ներկայացուցիչների (ԹՕ, SUS, ԿՍ, ՏԳ, ԿՍԿ և բիսեքսուալ) հետ հարցազրույցների կազմակերպման նպատակով: Այս տեխնիկայի միջոցով հավաքագրումը կազմակերպվել է առանցքային և խոցելի համախմբությունների ներկայացուցիչների հետ յուրաքանչյուր մարզում անմիջականորեն աշխատող ՀԿ-ների ակտիվ ներգրավմամբ. հետազոտության ընթացքում նրանց հետ կապն իրականացվել է այդ ՀԿ-ների կողմից, և վերջիններս նրանց հրավիրել են հարցազրույցի: Այս տեխնիկայի միջոցով հավաքագրված մասնակիցների հետ հարցազրույցները հիմնականում անցկացվել են ՀԿ-ների տարածքում կամ հարցվածների տներում՝ կախված այն բանից, թե հետազոտության մասնակիցը ինչ նախընտրություն է ունեցել:

2.3 Հետազոտության գործիք

Հետազոտության ընթացքում օգտագործվել է ձևայնացված գործիք՝ հարցաթերթ, որը պարունակում է հիմնականում փակ, որոշ դեպքերում՝ բաց հարցեր: Հարցաթերթը ներառում էր նաև բազմաթիվ լրացուցիչ հարցեր՝ երկրի ավելի համապարփակ վերլուծության համար: Այն ներառում է հետևյալ տեղեկատվական բաժինները.

- Սոցիալ-ժողովրդագրական տվյալներ,
- Խարանի և խտրականության փորձառություն,
- Ներքին խարան և հոգեբանական հավասարակշռվածություն,
- Բժշկական ծառայությունների հետ առնչություններ,
- Մարդու իրավունքներ և ոլորտում տեղի ունեցած փոփոխություններ,
- Խարանի և խտրականության փորձառությունը՝ ոչ ՄԻԱՎ կարգավիճակով պայմանավորված:

2.4 Էթիկական վերանայում

Սույն հետազոտությունն իրականացվել է ՀՀ առողջապահության նախարարության հաստատմամբ: Նախքան դաշտային աշխատանքների մեկնարկը ստացվել է Էթիկայի հանձնաժողովի կողմից հաստատման նամակ:

2.5 Իրականացում

Հետազոտությանը մասնակցելը կրել է կամավոր բնույթ: Բոլոր հարցվածները տեղեկացվել են հետազոտության նպատակի և խնդիրների մասին՝ ընդհուպ մինչև հետազոտության ցանկացած փուլում մասնակցությունից հրաժարվելու հնարավորության, ինչպես նաև հարցման գաղտնիության երաշխիքի մասին: Տեղեկատվությունը տրամադրվել է հարցվածների համար հասկանալի լեզվով (հայերեն), ստորագրվել է գրավոր տեղեկացված համաձայնության ձևերի երկուական օրինակ:

<u>Փոխհատուցում</u>

Հարցմանը մասնակցածները ստացել են փոքր պարգևներ՝ պարենային փաթեթների տեսքով (10.0 ԱՄՆ դոլարին համարժեք դրամին համարժեք): Նման վարձատրությունը համահունչ է փոխհատուցման ընդունված չափանիշներին, որոնք առաջարկվել են նմանատիպ ուսումնասիրություններում, ինչը նաև մեծացրել է մասնակիցների մոտ հարցազրույցներին մասնակցելու շահագրգռվածությունը: Հարցազրուցավարներին նաև հրահանգավորվել է, որ եթե հարցման ընթացքում առաջանան կանխարգելիչ, առողջապահական և սոցիալական ծառայությունների լրացուցիչ կարիքներ, կարևոր է մասնակցին ուղղորդել դեպի համապատասխան գործընկեր կազմակերպություններ:

<u>Տվյալների գաղտնիություն</u>

Բոլոր մասնակիցները տվել են իրենց գրավոր իրազեկված համաձայնությունը, որը նրանք կարող էին ցանկացած պահի չեղարկել: Մասնակիցների համար հնարավոր ռիսկերը ներառում էին գաղտնիության խախտումը և աննշան հոգեբանական անհանգստությունը, ինչը կարող էր առաջանալ որոշ զգայուն բնույթի հարցերից:

Հարցվածների անձնական տվյալները չեն գրանցվել: Գաղտնիությունն ապահովելու համար այս հետազոտության համար հարցաթերթերը և գրավոր իրազեկված համաձայնության ձևերն ունեցել են չկրկնվող նույնականացման ծածկագրեր, ինչպես առաջարկվել է հետազոտության մեթոդական ուղեցույցում:

<u>Անձնական տեղեկատվության պաշտպանություն</u>

Հետազոտության բոլոր փուլերում ապահովվել է անձնական տեղեկատվության պաշտպանությունը և գաղտնիությունը: Հարցազրույցներն անցկացվել են ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց մասնակցությամբ՝ Կենտրոնի կամ ՀԿ-ների առանձնացված սենյակներում, և այդ տարածքներ մուտքն արգելված է եղել հարցազրույցի ընթացքում բոլորի համար, բացառությամբ հետազոտությանն անմիջականորեն

ներգրավված մարդկանց: Հարկ է նշել, որ հարցազրույցները կազմակերպվել են մի տարածքում, որտեղ մասնակիցն իրեն ապահով և հարմարավետ է զգացել քննարկելու իր փորձառությունը: Որոշ դեպքերում առանցքային համախմբության ներկայացուցիչների հետ հարցազրույցներն անցկացվել են այլ վայրերում, ինչպիսիք են՝ սրճարանները, նրանց տները և այլ վայրերում, որոնք առաջարկվել կամ համաձայնեցվել են վերջիններիս հետ: Հարցվածների հետ հարցազրույցների ընթացքում ստացված համաձայնության բոլոր ձևաթղթերը և տվյալները փակ են պահվել հետազոտությունն իրականացնող կազմակերպության գրասենյակում, ինչը միայն լիազորված անձնակազմին է հասանելի եղել:

2.6 Ընթացակարգեր

Իրազեկված համաձայնություն

Համաձայնության ձևաթուղթը հետազոտական թիմի անդամի կողմից ցույց է տրվել այն անձանց, որոնք համապատասխանել են ընտրանքի չափանիշներին և ցանկություն են հայտնել մասնակցելու հարցմանը: Հարցազրուցավարը բանավոր քննարկել է համաձայնության ձևաթղթի բովանդակությունը և, երբ հետազոտության նպատակները պարզ են եղել մասնակիցներին, ստացել են նրանց գրավոր համաձայնությունը:

Բոլոր մասնակիցներին տեղեկացվել է, որ իրենց մասնակցությունը կամավոր է, և ողջ տեղեկությունը գաղտնի է պահվելու (մասնակիցների անձնական տվյալները չեն օգտագործվելու, քանի որ տվյալները վերլուծվելու են ընդհանրացված և ամփոփ կարգով): Մասնակիցներին նաև հավաստիացվել է, որ նրանց մասնակցությունը կամ մասնակցության մերժումը որևէ կերպ չի ազդի իրենց ստացած ծառայությունների վրա: Նրանք հնարավորություն են ունեցել պարզաբանող հարցեր տալ հետազոտության տարբեր ասպեկտների և դրան մասնակցության վերաբերյալ:

Տվյալների հավաքագրման որակի վերահսկում և կառավարում

Քանակական տվյալների հավաքագրման գործընթացը վերահսկվել է ինչպես դաշտային աշխատանքների ժամանակ խմբավարներին և համակարգողի կողմից, այնպես էլ հավաքագրված տվյալների մշակման և կոդավորման ժամանակ մոնիթորինգի խմբի և տեխնիկական անձնակազմի կողմից: Տվյալների հավաքագրումը տևել է 3 ամիս. այն սկսվել է 2023 թվականի հունվարի 10-ին և ավարտվել 2023 թվականի ապրիլի 21-ին: Լրացված հարցաթերթերի որակի վերահսկումն ուղղված է եղել հարցաթերթի բովանդակության (պատասխանների համապատասխանության ստուգման, հակասությունների և համակարգային սխալների բացահայտման վրա և այլն), ինչպես նաև տեխնիկական կողմերի՝ լրացված հարցաթերթի ամբողջականության ստուգման վրա:

Կիրառվել է տրամաբանական ստուգում, ապահովվել են հարցերի շարքի ավտոմատացված անցումները, մուլտիմեդիա տվյալների և հարցաթերթի ստուգման համար անհրաժեշտ համալիր ռեսուրսները: Քանակական տվյալների մեջ անհամապատասխանությունները գտնելու և բոլոր հնարավոր դեպքերում դրանք շտկելու նպատակով իրականացվել են տվյալների մաքրման աշխատանքներ:

Ինչ վերաբերում է պլանավորված հարցազրույցներին, ապա թիմի ղեկավարն է որոշել, թե որն է հարցազրուցավարներին հավաքագրելու լավագույն միջոցը, և որ համատեքստում կամ միջավայրում ավելի լավ կլիներ հարցազրույց իրականացնել հարցվողների հետ: Թիմի ղեկավարը կազմել է պոտենցիալ հարցվածների անունների և կոնտակտային տվյալների ցուցակ, որպեսզի հարցազրուցավարները կապ հաստատեն նրանց հետ: Ինչ վերաբերում է այն միջավայրին կամ վայրին, որտեղ տեղի է ունեցել հարցազրույցը, կարևոր էր, որ հարցվողները գաղտնիություն ունենան հարցաշարին պատասխանելիս, ինչպես նաև այն, որ նրանք ունենան հարցազրուցավարի աջակցությունը ողջ գործընթացքում (կողք կողքի սկզբունքի համաձայն): Դրան հասնելու ամենադյուրին ճանապարհն հարցազրույցի մասնակիցների հետ առանձին հանդիպելն էր:

<u>Հարցազրուցավարների վերապատրաստում</u>

Հետազոտության նախապատրաստման և անցկացման համար իրականացվել է հարցազրուցավարների վերապատրաստում հնգօրյա գրաֆիկով՝ հարցազրուցավարներին տրամադրելով դիտարկման համար անհրաժեշտ հարցաթերթերը, հարցաթերթը լրացնելու ուղեցույցը և ընտրանքի ցուցումները: Հրահանգավորում-դասընթացների ընթացքում հարցազրուցավարներին տրվել են պարզաբանումներ՝ կապված հարցաթերթում ներառված ցուցանիշների լրացման, հարցազրույցից հրաժարվելու և այլ դեպքերում հարցաթերթը լրացնելու առանձնահատկությունների վերաբերյալ:

Հրահանգավորման դասընթացից հետո հարցազրուցավարները եռօրյա ժամկետում փորձարկել են հարցաթերթը, որից հետո պլանավորված հանդիպման ժամանակ ներկայացրել են իրենց դիտարկումները, ինչպես նաև քննարկել դաշտային աշխատանքի ընթացքում առաջացող խնդիրները և մարտահրավերները:

Հարկ է փաստել, որ հետազոտական թիմը նշանակալի փորձ ունի հետազոտական կանոնակարգի էթիկական հաստատում ստանալու հարցում: Հիմնական հետազոտողներն ունեն վավեր էթիկական հետազոտությունների հավաստագրեր՝ իրենց հետազոտական աշխատանքում էթիկական պահանջները պահպանելու վերաբերյալ: Հետազոտական թիմի յուրաքանչյուր անդամ ստորագրել է գաղտնիության պայմանագիր:

2.7 Տվյալների վերլուծություն

Հետազոտության տվյալները հավաքագրվել և գրանցվել են թղթի վրա, այնուհետև ձեռքով մուտքագրվել են առցանց տվյալների բազայում՝ REDCap (տվյալների հավաքագրման հարթակ, որը ստեղծվել է Վանդերբիլթի համալսարանի կողմից տվյալների կառավարման համար): Այն հատուկ նախագծվել է գործընկերների (UNAIDS, ICW և GNP+) կողմից՝ տվյալների պահպանման, մուտքագրման և վերլուծության նպատակով: Քանակական տվյալների վերլուծությունը կատարվել է «SPSS» վիճակագրական փաթեթի[11] միջոցով, հաշվարկվել են հաճախականություններ, փոխկապվածություններ, կատարվել է խաչաձև վերլուծություն:

[11] «SPSS»-ը (Statistical Package for the Social Sciences) վիճակագրական տեղեկատվության մշակման և վերլուծությունների համար նախատեսված ծրագրային փաթեթ է, որը լայնորեն կիրառվում է հասարակական գիտություններում:

3. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

3.1 ՄԻԱՎ-ՈՎ ԱՊՐՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ

Սեռ

Հարցմանը մասնակցած 531 ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց մեջ, ըստ սեռային բաշխվածության, իգական սեռի ներկայացուցիչները կազմել են ընտրանքի 31.3%-ը (n=166), իսկ արական սեռի ներկայացուցիչները՝ 68.7%-ը (n=365):

Գենդեր և տարիք

Հարցմանը մասնակցած 531 ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց մեջ, ըստ գենդերային բաշխվածության, կանայք կազմել են 31.3% (n=166), տղամարդիկ՝ 66.8% (n=355), ՏԳ-ները՝ 0.9% (n=5) և մասնակիցների 0.9%-ը (n=5) իր ինքնությունը չի ճանաչել որպես կին, տղամարդ կամ ՏԳ:

Հարցման տվյալները ցույց են տալիս, որ երիտասարդները (18-29 տարեկան) կազմել են հարցվածների 4.1%-ը, հարցվածների 68.9%-ը ներկայացրել են 30-49 տարեկան ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ, իսկ 50 տարեկանից բարձր հարցվածների տեսակարար կշիռը կազմել է 26.9%: Հաշվի առնելով հարցվածների տարիքային բաշխումն ըստ գենդերի՝ ստորև ներկայացված աղյուսակից պարզ է դառնում, որ 40-49 տարեկան կանայք կազմել են հետազոտությանը մասնակցած կանանց համախմբության գրեթե կեսը և գերակշռել են նույն տարիքային խմբի տղամարդկանց նկատմամբ 4%-ով:

Աղյուսակ 3. Տարիքն՝ ըստ գենդերի, n=531

Տարիքային խմբեր	Կին (n=166)	Տղամարդ (n=355)	ՏԳ (n=5)	Ոչ կին, ոչ տղամարդ, և ոչ էլ ՏԳ (n=5)	Ընդամենը (n=531)
	%	%	%	%	%
18-19 տարեկան	0.6%	0.6%	0.0%	0.0%	4.1% (n=22)
20-24 տարեկան	0.6%	0.3%	40.0%	20.0%	
25-29 տարեկան	3.6%	2.0%	0.0%	20.0%	
30-39 տարեկան	28.9%	29.0%	20.0%	20.0%	68.9% (n=366)
40-49 տարեկան	43.4%	39.2%	20.0%	20.0%	
50 տարեկան և բարձր	22.9%	29.0%	20.0%	20.0%	26.9% (n=143)

Կարգավիճակի իրազեկում

Հետազոտության արդյունքների համաձայն՝ միջինում 26.2%-ը տեղյակ է եղել իր ՄԻԱՎ դրական կարգավիճակի մասին 1-4 տարի, հարցվածների մեկ երրորդը՝ 5-9 տարի, 25.4%-ը իմացել է իր ՄԻԱՎ դրական կարգավիճակի մասին 10-14 տարի, իսկ 14.7%-ը՝ ավելի քան 15 տարի: Գենդերային տեսանկյունից էական շեղումներ գենդերի և կարգավիճակի մասին իրազեկված տղամարդկանց ու կանանց միջև չեն եղել, մինչդեռ ՏԳ-ների գրեթե 60%-ը (3/5) իր ՄԻԱՎ դրական կարգավիճակի մասին իրազեկվել է վերջին 1-9 տարիների ընթացքում:

Աղյուսակ 4. Կարգավիճակի իրազեկումն՝ ըստ գենդերի, n=531

ՄԻԱՎ դրական կարգավիճակի մասին իրազեկման ժամանակահատվածը	Կին (n=166)	Տղամարդ (n=355)	ՏԳ (n=5)	Ոչ կին, ոչ տղամարդ, և ոչ էլ ՏԳ (n=5)	Ընդամենը (n=531)
	%	%	%	%	%
1-4 տարի	22.9%	27.0%	60.0%	40.0%	26.2% (n=139)
5-9 տարի	30.7%	35.2%	40.0%	20.0%	33.7% (n=179)
10-14 տարի	31.9%	22.5%	0.0%	40.0%	25.4% (n=135)
Ավելի քան 15 տարի	14.5%	15.2%	0.0%	0.0%	14.7% (n=78)

Ընտանեկան կարգավիճակ և սեռական հարաբերություններ

Ըստ հետազոտության տվյալների՝ ընդհանուր առմամբ, հետազոտության մասնակիցների 28.8%-ը ինտիմ/սեռական հարաբերությունների մեջ չի եղել:

Ստորև բերված աղյուսակից պարզ է դառնում, որ բոլոր խմբերի համեմատ կանայք (51.2%, 85/166) և ՏԳ-ները (60.0%, 3/5) ավելի քիչ են ներգրավված եղել ինտիմ/սեռական հարաբերությունների մեջ հարցման ժամանակահատվածում:

Աղյուսակ 5. Ներկայումս ինտիմ/սեռական հարաբերություններում լինելն՝ ըստ սեռի, n=531

Պատասխան	Ընդամենը հարցվածներ		ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ			
			Իգական		Արական	
	n	%	n	%	n	%
Այո	378	71.2%	85	51.2%	293	80.3%
Ոչ	153	28.8%	81	48.8%	72	19.7%
Ընդամենը	**531**	**100.0%**	**166**	**100.0%**	**365**	**100.0%**

Աղյուսակ 6. Ներկայումս ինտիմ/սեռական հարաբերություններում լինելն՝ ըստ առանցքային և խոցելի համախմբությունների

Պատասխան	SUS		ԿՍԿ		Բիսեքսուալ		ԿՍ		ԹՕ		ՏԳ	
	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%
Այո	20	90.9%	1	33.3%	5	100.0%	19	79.2%	60	81.1%	3	60.0%
Ոչ	2	9.1%	2	66.7%	0	0.0%	5	20.8%	14	18.9%	2	40.0%
Ընդամենը	**22**	**100.0%**	**3**	**100.0%**	**5**	**100.0%**	**24**	**100.0%**	**74**	**100.0%**	**5**	**100.0%**

ՄԻԱՎ-ով ապրող զուգընկերներ

Սեռական հարաբերությունների մեջ գտնվողների շրջանում (n=378) կարելի է նկատել զգալի տարբերություններ տղամարդկանց և կանանց միջև, երբ խոսքը վերաբերում էր նրանց, ովքեր ապրում են ՄԻԱՎ բացասական կարգավիճակ ունեցող զուգընկերների հետ: Ըստ ստորև բերված աղյուսակի՝ կանանց միայն մեկ երրորդն է նշել, որ իրենց զուգընկերներն ունեն ՄԻԱՎ դրական կարգավիճակ, մինչդեռ տղամարդկանց մոտ դա հարցվածների գրեթե երկու երրորդն է: Նաև երեք ՏԳ-ներ նշել են իրենց զուգընկերների ՄԻԱՎ բացասական կարգավիճակի մասին:

Աղյուսակ 7. Զուգընկերոջ կարգավիճակն՝ ըստ գենդերի, n=378

Գենդեր	Արդյո՞ք Ձեր զուգընկերը ՄԻԱՎ կարգավիճակ ունի					
	Այո, իմ զուգընկերը ունի ՄԻԱՎ դրական կարգավիճակ		Ոչ, իմ զուգընկերը չունի ՄԻԱՎ դրական կարգավիճակ		Ես վստահ չեմ՝ արդյոք իմ զուգընկերը ունի ՄԻԱՎ դրական կարգավիճակ, թե ոչ	
	n	%	n	%	n	%
Կին (n=85)	43	31.4%	30	15.2%	12	27.3%
Տղամարդ (n=286)	93	**67.9%**	162	**82.2%**	31	**70.5%**
ՏԳ (n=3)	0	0.0%	3	1.5%	0	0.0%
Ոչ կին, ոչ տղամարդ, և ոչ էլ ՏԳ (n=4)	1	0.7%	2	1.0%	1	2.3%
Ընդամենը (n=378)	**137**	**100.0%**	**197**	**100.0%**	**44**	**100.0%**

Երեխաների թիվ

Հետազոտության մասնակիցների շրջանում կանանց 75%-ը (124/166), տղամարդկանց գրեթե կեսը (51.2%, 187/365), ԿՍ-ների 33.3% (8/24), SUS-ների 43.2% (32/74), ինչպես նաև երկու ԿՍԿ ունեն առնվազն մեկ երեխա: Բոլոր ՏԳ-ները (100%, 5/5), նշել են, որ տնային տնտեսությունում իրենց հոգածության ներքո գտնվող երեխաներ չունեն:

Աղյուսակ 8. Տանը հոգածության ներքո գտնվող երեխաների թիվն՝ ըստ սեռի, n=531

Երեխաների թիվ	Ընդամենը հարցվածներ		ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ			
			Իգական		Արական	
	n	%	n	%	n	%
0	220	41.4%	42	25.3%	178	48.8%
1	126	23.7%	63	38.0%	63	17.3%
2	115	21.7%	33	19.9%	82	22.5%
3	56	10.5%	22	13.3%	34	9.3%
4	8	1.5%	4	2.4%	4	1.1%
5	2	0.4%	1	0.6%	1	0.3%
7	2	0.4%	0	0.0%	2	0.5%
9	1	0.2%	0	0.0%	1	0.3%
10	1	0.2%	1	0.6%	0	0.0%
Ընդամենը	**531**	**100.0%**	**166**	**100.0%**	**365**	**100.0%**

Աղյուսակ 9. Տանը հոգածության ներքո գտնվող երեխաների թիվն՝ ըստ առանցքային և խոցելի համախմբությունների

Երեխաների թիվ	SUS		ԿՍԿ		Բիսեքսուալ		ԿՍ		ԹՕ		ՏԳ	
	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%
0	13	92.9%	1	33.3%	5	100.0%	16	66.7%	42	56.8%	5	100.0%
1	0	0.0%	1	33.3%	0	0.0%	2	8.3%	13	17.6%	0	0.0%
2	1	7.1%	0	0.0%	0	0.0%	3	12.5%	12	16.2%	0	0.0%
3	0	0.0%	1	33.3%	0	0.0%	1	4.2%	5	6.8%	0	0.0%

4	0	0.0%	0	0.0%	0	0.0%	2	8.3%	1	1.4%	0	0.0%
5	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%
7	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	1	1.4%	0	0.0%
9	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%
10	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%
Ընդամենը	**22**	**100.0%**	**3**	**100.0%**	**5**	**100.0%**	**24**	**100.0%**	**74**	**100.0%**	**5**	**100.0%**

Կրթություն, զբաղվածություն և եկամուտ

Հետազոտությունը ցույց է տվել, որ հարցվածներից շատ քչերն են (3.6%) հարցման ժամանակահատվածում ներգրավված եղել որևէ տեսակի ֆորմալ կրթության գործընթացում: Հետաքրքրաշարժ է, որ ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է բիսեքսուալների (40%, 2/5) և ՏԳ-ների շրջանում (20%, 1/5):

Գծապատկեր 1. Կրթության մեջ ներկայիս ներգրավվածությունն՝ ըստ սեռի, առանցքային և խոցելի համախմբությունների



Ըստ հետազոտության՝ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց ավելի քան 56%-ն ունեցել է ընդհանուր միջնակարգ կրթություն, մինչդեռ 3%-ն ունեցել է միայն տարրական կրթություն, իսկ ընդհանրապես կրթություն չի ունեցել 1.5%-ը, իսկ հարցվածների 39%-ն ունեցել է մասնագիտական կամ բարձրագույն կրթություն: Լրացուցիչ մանրամասները ցույց են տալիս, որ կրթություն չունեցող հարցվածների ամենամեծ թիվը բաժին է ընկնում ՄԻԱՎ-ով ապրող կանանց (3.6%): 5-ական ՏԳ-ներից և բիսեքսուալներից 4-ն ունեցել են բարձրագույն կամ մասնագիտական կրթություն: Այս ցուցանիշը բարձր է եղել նաև SUS-ների և ԿՍ-ների մոտ, որոնք կազմել են 55%, մինչդեռ կանայք, ընդհանուր առմամբ, ունեցել են ավելի ցածր կրթական մակարդակ՝ համեմատած այլ խմբերի ներկայացուցիչների հետ:

Գծապատկեր 2. Կրթական մակարդակն՝ ըստ սեռի, առանցքային և խոցելի համախմբությունների



Հարցազրույցի պահին ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում գործազուրկ հարցվածների թիվը կազմել է ընտրանքի 27.7%-ը (n=147), հարցվածների 38%-ն նշել է, որ աշխատում է ամբողջ դրույքով, իսկ 24.2%-ը նշել է, որ ներգրավված է կես դրույքով աշխատանքներում կամ կատարում է անկանոն աշխատանք:

Աղյուսակ 10. ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում զբաղվածությունն՝ ըստ սեռի, n=531

Պատասխան	Ընդամենը հարցվածներ		ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ			
			Իգական		Արական	
	n	%	n	%	n	%
Ամբողջ դրույքով (որպես աշխատակից)	160	**30.1%**	44	26.5%	116	**31.8%**
Կես դրույքով (որպես աշխատակից)	39	7.3%	17	10.2%	22	6.0%
Աշխատում եմ ամբողջ դրույքով, բայց ոչ որպես աշխատակից (ինքնազբաղված կամ բիզնեսի սեփականատեր)	42	7.9%	7	4.2%	35	9.6%
Կատարում եմ անկանոն կամ ոչ պաշտոնական կես դրույքով աշխատանք (ինքնազբաղված կամ վճարովի աշխատանք այլոց համար)	90	16.9%	24	14.5%	66	18.1%
Թոշակի անցած/թոշակառու	53	10.0%	14	8.4%	39	10.7%
Գործազուրկ	147	**27.7%**	60	**36.1%**	87	23.8%
Ընդամենը	**531**	**100.0%**	**166**	**100.0%**	**365**	**100.0%**

Աղյուսակ 11. ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում զբաղվածությունն՝ ըստ առանցքային և խոցելի համախմբությունների

Պատասխան	SUS		ԿՍԿ		Բիսեքսուալ		ԿՍ		ԹՕ		ՏԳ	
	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%
Ամբողջ դրույքով (որպես	9	**40.9%**	0	0.0%	4	**80.0%**	7	29.2%	19	25.7%	2	**40.0%**

աշխատակից)												
Կես դրույքով (որպես աշխատակից)	3	**13.6%**	0	0.0%	0	0.0%	3	12.5%	4	5.4%	0	0.0%
Աշխատում եմ ամբողջ դրույքով, բայց ոչ որպես աշխատակից (ինքնազբաղված կամ բիզնեսի սեփականատեր)	4	18.2%	0	0.0%	1	20.0%	2	8.3%	0	0.0%	2	**40.0%**
Կատարում եմ անկանոն կամ ոչ պաշտոնական կես դրույքով աշխատանք (ինքնազբաղված կամ վճարովի աշխատանք այլոց համար)	2	9.1%	1	33.3%	0	0.0%	2	8.3%	12	16.2%	0	0.0%
Թոշակի անցած/թոշակառու	0	0.0%	0	0.0%	0	0.0%	1	4.2%	15	**20.3%**	0	0.0%
Գործազուրկ	4	18.2%	2	**66.7%**	0	0.0%	9	**37.5%**	24	32.4%	1	20.0%
Ընդամենը	**22**	**100.0%**	**3**	**100.0%**	**5**	**100.0%**	**24**	**100.0%**	**74**	**100.0%**	**5**	**100.0%**

Մանրամասն վերլուծությունը ցույց է տվել, որ ՄԻԱՎ-ով ապրող գործազուրկ մարդկանց տեսակարար կշիռն ավելի բարձր է եղել կանանց (36.1%), մասնավորապես, ԿՍԿ-ների (66.7%, 2/3) և ԿՍ-ների (37.5%, 9/24) շրջանում, և համեմատաբար ավելի ցածր՝ բիսեքսուալների և ՏԳ-ների շրջանում (լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Հավելված I):

ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց մեծամասնության մոտ կյանքի դժվարին իրավիճակն արտացոլվել է նաև վերջին 12 ամիսների ընթացքում իրենց հիմնական կարիքները (սնունդ, հագուստ, կացարան և այլն) բավարարելու հարցում: Ընդհանուր առմամբ, 24.1%-ը նշել է, որ հետազոտությանը նախորդող վերջին 12 ամիսների ընթացքում միշտ կարողացել է բավարարել իր կարիքները: Ինչպես ցույց է տրված ստորև բերված գծապատկերում, միջին հաշվով, հարցվածների միայն մեկ չորրորդն է հայտնել սեփական կարիքները բավարարելու անկարողության մասին, մինչդեռ 50%-ից ավելին ընտրել է «երբեմն» տարբերակը. ՏԳ-ների և ՄԻԱՎ-ով ապրող կանանց շրջանում այս ցուցանիշը զգալիորեն ավելի ցածր է եղել: Կարևոր է նշել, որ SUS-ների գրեթե 55%-ը և բիսեքսուալների 80%-ը (4/5) նշել են, որ նրանք հիմնականում կարողացել են բավարարել իրենց հիմնական կարիքները:

Գծապատկեր 3. Վերջին 12 ամիսների ընթացքում հիմնական կարիքների բավարարումն՝ ըստ սեռի, առանցքային և խոցելի համախմբությունների



Անդամակցություն ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց ցանցի կամ աջակցող խմբերի

Հետազոտության ընթացքում նաև ուսումնասիրվել է, թե արդյո՞ք մասնակիցները եղել են կամ հանդիսանում են ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց աջակցության խմբերի անդամներ: Ըստ տվյալների՝ ՄԻԱՎ-ով ապրող տղամարդիկ և ԹՕ-ները ավելի քիչ էին ներգրավված եղել սոցիալական ակտիվության մեջ, համապատասխանաբար, տղամարդկանց մոտ 14%-ը և ԹՕ-ների 11%-ն է հաստատել իրենց անդամակցությունը ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց աջակցության խմբերին:

Աղյուսակ 12. ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց աջակցող խմբերին անդամակցությունն՝ ըստ սեռի, n=531

Պատասխան	Ընդամենը հարցվածներ		ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ			
			Իգական		Արական	
	n	%	n	%	n	%
Արդյո՞ք դուք ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց ցանցի կամ աջակցող խմբի անդամ եք						
Այո	92	17.3%	39	**23.5%**	53	14.5%
Ոչ	439	**81.7%**	127	76.5%	312	85.5%
Ընդամենը	**531**	**100.0%**	**166**	**100.0%**	**365**	**100.0%**

Աղյուսակ 13. ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց աջակցող խմբերին անդամակցությունն՝ ըստ առանցքային և խոցելի համախմբությունների

Պատասխան	SUS		ԿՍԿ		Բիսեքսուալ		ԿՍ		ԹՕ		ՏԳ	
	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%
Արդյո՞ք դուք ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց ցանցի կամ աջակցող խմբի անդամ եք												
Այո	3	13.6%	3	100.0%	2	40.0%	10	41.7%	8	**10.8%**	2	40.0%
Ոչ	19	86.4%	0	0.0%	3	60.0%	14	58.3%	66	89.2%	3	60.0%
Ընդամենը	**22**	**100.0%**	**3**	**100.0%**	**5**	**100.0%**	**24**	**100.0%**	**74**	**100.0%**	**5**	**100.0%**

3.2 ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Հարցման ընդհանուր մասնակիցների 68.2%-ը հայտնել է, որ իրենց ամուսինները, կանայք կամ զուգընկերները, ինչպես նաև իրենց ընտանիքի այլ անդամների 68.1%-ը տեղյակ են իրենց ՄԻԱՎ դրական կարգավիճակի մասին, մինչդեռ երեխաների միայն 19.2%-ն է տեղյակ եղել ծնողների կարգավիճակի մասին, իսկ ընկերների՝ 31.6%-ը: Հարևանները, գործատուները, գործընկերները և այլ մարդիկ ամենաքիչ տեղեկացվածներն են եղել այս հարցում: Հետազոտության տվյալների համաձայն՝ որոշ դեպքերում հարցվածների կարգավիճակի մասին տեղեկատվությունը բացահայտվել է «ընտանիքի այլ անդամներին» (1.1%, n=6) և ամուսիններին կամ զուգընկերներին (1.3%, n=7) առանց հարցվածների համաձայնության:

Աղյուսակ 14. Հետևյալ մարդիկ/մարդկանց խմբերը տեղյա՞կ են Ձեր ՄԻԱՎ կարգավիճակի մասին

#	Մարդիկ կամ մարդկանց խումբ	Այո	Ոչ	Դժ. պատ./ Վերաբերելի չէ	Եթե «Այո», արդյո՞ք Ձեր կարգավիճակի մասին ասվել է առանց ձեր համաձայնության
1.	Ձեր ամուսինը/կինը/զուգընկեր(ները)	**68.2%**	28.2%	3.6%	**1.3%**

2.	Ձեր երեխաները	19.2%	75.0%	5.8%	0.6%
3.	Ընտանիքի այլ անդամներ	**68.1%**	31.1%	0.8%	**1.1%**
4.	Ձեր ընկերները	31.6%	68.4%	0.0%	0.0%
5.	Ձեր հարևանները	2.4%	96.8%	0.8%	0.2%
6.	Ձեր գործատու(ները)	2.5%	94.1%	3.4%	0.4%
7.	Ձեր գործընկերները	2.5%	94.3%	3.2%	0.2%
8.	Ձեր ուսուցիչները/դպրոցի կառավարիչ(ները)	0.2%	91.7%	8.1%	0.0%
9.	Ձեր դասընկերները	0.4%	94.4%	5.3%	0.0%
10.	Տեղական ղեկավարները	0.6%	98.8%	0.6%	0.0%
11.	Հեղինակավոր անձինք (օրինակ՝ ոստիկաններ, դատավորներ, իրավապահներ և այլն)	3.0%	96.3%	0.6%	0.0%

Հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ միջինում հարցման մասնակիցների կեսից ավելին (57.3%) չի համաձայնել այն պնդման հետ, որ ժամանակի ընթացքում իրենց կարգավիճակի բացահայտումն իրենց համար ավելի հեշտ է դարձել: Ավելին, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց 29%-ը չի ունեցել դրական փորձառություն իր կարգավիճակը ընկերներին և ընտանիքին հայտնելու պարագայում, և միայն 42%-ից քիչ հարցվածներ են ունեցել դրական փորձառություն: Որոշ դեպքերում էլ (17.9%) ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ չեն ստացել իրենց հարազատների աջակցությունը իրենց կարգավիճակի մասին հայտնելուց հետո: Ստորև բերված աղյուսակները ցույց են տալիս հիմնական արդյունքները, մինչդեռ ամբողջական տեղեկատվությունը կարելի է գտնել Հավելված Ի-ում:

Աղյուսակ 15. Կարգավիճակի բացահայտման փորձառությունն (Դատողություն 1)՝ ըստ սեռի, n=531

Պատասխան	Ընդամենը հարցվածներ		ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ			
			Իգական		Արական	
	n	%	n	%	n	%
Դատողություն 1: Ընդհանուր առմամբ, Ձեր ՄԻԱՎ կարգավիճակը մտերիմ մարդկանց (օրինակ՝ զուգընկեր, ընտանիք, մտերիմ ընկերներ) բացահայտելը դրական փորձառություն է եղել						
Համաձայն եմ	221	**41.6%**	82	49.4%	139	38.1%
Որոշ չափով համաձայն եմ	130	24.5%	34	20.5%	96	26.3%
Համաձայն չեմ	153	28.8%	44	26.5%	109	29.9%
Դժվարանում եմ պատասխանել	27	5.1%	6	3.6%	21	5.8%
Ընդամենը	**531**	**100.0%**	**166**	**100.0%**	**365**	**100.0%**

Աղյուսակ 16. Կարգավիճակի բացահայտման փորձառությունն (Դատողություն 1)՝ ըստ առանցքային և խոցելի համախմբությունների

Պատասխան	SUS		ԿՍԿ		Բիսեքսուալ		ԿՍ		ԹՕ		ՏԳ	
	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%
Դատողություն 1: Ընդհանուր առմամբ, Ձեր ՄԻԱՎ կարգավիճակը մտերիմ մարդկանց (օրինակ՝ զուգընկեր, ընտանիք, մտերիմ ընկերներ) բացահայտելը դրական փորձառություն է եղել												
Համաձայն եմ	2	9.1%	2	66.7%	1	20.0%	6	25.0%	30	40.5%	2	40.0%
Որոշ չափով համաձայն եմ	8	36.4%	1	33.3%	2	40.0%	11	45.8%	16	21.6%	2	40.0%

Համաձայն չեմ	9	**40.9%**	0	0.0%	2	**40.0%**	6	25.0%	22	29.7%	1	20.0%
Դժ. պատ.	3	13.6%	0	0.0%	0	0.0%	1	4.2%	6	8.1%	0	0.0%
Ընդամենը	**22**	**100.0%**	**3**	**100.0%**	**5**	**100.0%**	**24**	**100.0%**	**74**	**100.0%**	**5**	**100.0%**

Աղյուսակ 17. Կարգավիճակի բացահայտման փորձառությունն (Դատողություն 2)՝ ըստ սեռի, n=531

Պատասխան	Ընդամենը հարցվածներ		ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ			
			Իգական		Արական	
	n	%	n	%	n	%
Դատողություն 2: Ընդհանուր առմամբ, Ձեր մտերիմ մարդիկ եղել են աջակցող, երբ առաջին անգամ իմացել են Ձեր ՄԻԱՎ կարգավիճակի մասին						
Համաձայն եմ	342	**64.4%**	113	68.1%	229	62.7%
Որոշ չափով համաձայն եմ	80	15.1%	17	10.2%	63	17.3%
Համաձայն չեմ	95	17.9%	32	19.3%	63	17.3%
Դժվարանում եմ պատասխանել	14	2.6%	4	2.4%	10	2.7%
Ընդամենը	**531**	**100.0%**	**166**	**100.0%**	**365**	**100.0%**

Աղյուսակ 18. Կարգավիճակի բացահայտման փորձառությունն (Դոտողություն 2)՝ ըստ առանցքային և խոցելի համախմբությունների

Պատասխան	SUS		ԿՍԿ		Բիսեքսուալ		ԿՍ		ԹՕ		ՏԳ	
	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%
Դատողություն 2: Ընդհանուր առմամբ, Ձեր մտերիմ մարդիկ եղել են աջակցող, երբ առաջին անգամ իմացել են Ձեր ՄԻԱՎ կարգավիճակի մասին												
Համաձայն եմ	9	40.9%	2	66.7%	2	40.0%	9	37.5%	47	63.5%	2	40.0%
Որոշ չափով համաձայն եմ	8	36.4%	0	0.0%	1	20.0%	5	20.8%	11	14.9%	2	40.0%
Համաձայն չեմ	4	18.2%	1	**33.3%**	1	20.0%	8	**33.3%**	13	17.6%	1	20.0%
Դժ. պատ.	1	4.5%	0	0.0%	1	20.0%	2	8.3%	3	4.1%	0	0.0%
Ընդամենը	**22**	**100.0%**	**3**	**100.0%**	**5**	**100.0%**	**24**	**100.0%**	**74**	**100.0%**	**5**	**100.0%**

Խարանման և խտրականության փորձառություններ

Հետազոտությունն անդրադարձել է նաև ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի և խտրականության դեպքերին: Հաշվի առնելով, որ ՄԻԱՎ-ով ապրող շատ մարդիկ ունեցել են իրենց կարգավիճակի բացահայտման բացասական փորձառություն, զարմանալի չէ, որ խտրականությունն և խարանը կարող էին տեղ գտնել նրանց սոցիալական միջավայրում: ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց ուղղված բացասական մեկնաբանություններ կամ բամբասանք է տարածվել հիմնականում իրենց ընտանիքի անդամների կողմից (8.1%), և դա տեղի չի ունեցել հարցազրույցին նախորդող վերջին 12 ամիսների ընթացքում: Պարզվել է նաև, որ առանցքային և խոցելի համախմբությունների ներկայացուցիչները (մասնավորապես՝ SUS, ԿՍ և ԿՍԿ) ավելի մեծ հավանականությամբ են ենթարկվել խտրականության և խարանի:

Աղյուսակ 19. Խարանի և խտրականության փորձառություններն՝ ըստ սեռի, առանցքային և խոցելի համախմբությունների

Պատասխան	Ընդամենը հարցվածներ		ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ				SUS		ԿՍԿ		Բիսեքսուալ		ԿՍ		ԹՕ		ՏԳ	
			Իգական		Արական													
	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%
Երբևէ Ձեզ խոչընդոտել կամ արգելե՞լ են մասնակցել հավաքույթների կամ միջոցառումների Ձեր ՄԻԱՎ կարգավիճակով պայմանավորված (օրինակ՝ հարսանիքներ, թաղման արարողություններ, խնջույքներ, ակումբներ):																		
Այո, վերջին 12 ամիսների ընթացքում	2	0.4%	1	0.6%	1	0.3%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%
Այո, բայց ոչ վերջին 12 ամիսների ընթացքում	14	2.6%	5	3.0%	9	2.5%	3	**13.6%**	0	0.0%	0	0.0%	3	**12.5%**	5	6.8%	0	0.0%
Ոչ	483	91.0%	150	90.4%	333	91.2%	19	86.4%	3	100.0%	5	100.0%	18	75.0%	62	83.8%	4	80.0%
Դժ. պատ.	32	6.0%	10	6.0%	22	6.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	3	12.5%	7	9.5%	1	20.0%
Ընդամենը	**531**	**100.0%**	**166**	**100.0%**	**365**	**100.0%**	**22**	**100.0%**	**3**	**100.0%**	**5**	**100.0%**	**24**	**100.0%**	**74**	**100.0%**	**5**	**100.0%**

Պատասխան	Ընդամենը հարցվածներ		ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ				SUS		ԿՍԿ		Բիսեքսուալ		ԿՍ		ԹՕ		ՏԳ	
			Իգական		Արական													
	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%
Երբևէ Ձեզ խոչընդոտել կամ արգելե՞լ են մասնակցել ընտանեկան միջոցառումների Ձեր ՄԻԱՎ կարգավիճակի պատճառով:																		
Այո, վերջին 12 ամիսների ընթացքում	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%
Այո, բայց ոչ վերջին 12 ամիսների ընթացքում	17	3.2%	9	5.4%	8	2.2%	3	**13.6%**	0	0.0%	0	0.0%	2	**8.3%**	3	4.1%	0	0.0%
Ոչ	487	91.7%	150	90.4%	337	92.3%	18	81.8%	3	100.0%	5	100.0%	20	83.3%	65	87.8%	4	80.0%
Դժ. պատ.	27	5.1%	7	4.2%	20	5.5%	1	4.5%	0	0.0%	0	0.0%	2	8.3%	6	8.1%	1	20.0%
Ընդամենը	**531**	**100.0%**	**166**	**100.0%**	**365**	**100.0%**	**22**	**100.0%**	**3**	**100.0%**	**5**	**100.0%**	**24**	**100.0%**	**74**	**100.0%**	**5**	**100.0%**

Պատասխան	Ընդամենը հարցվածներ		ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ				SUS		ԿՍԿ		Բիսեքսուալ		ԿՍ		ԹՕ		ՏԳ	
			Իգական		Արական													
	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%
Երբևէ ընտանիքի անդամները խտրական դիտողություններ կամ բամբասանքներ հնչեցրե՞լ են Ձեր հասցեին Ձեր ՄԻԱՎ կարգավիճակի պատճառով:																		
Այո, վերջին 12 ամիսների ընթացքում	2	0.4%	1	0.6%	1	0.3%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	1	1.4%	0	0.0%
Այո, բայց ոչ վերջին 12 ամիսների ընթացքում	43	**8.1%**	9	5.4%	34	9.3%	8	**36.4%**	0	0.0%	0	0.0%	5	**20.8%**	7	9.5%	1	**20.0%**
Ոչ	462	87.0%	149	89.8%	313	85.8%	12	54.5%	3	100.0%	4	80.0%	18	75.0%	58	78.4%	3	60.0%
Դժ. պատ.	24	4.5%	7	4.2%	17	4.7%	2	9.1%	0	0.0%	1	20.0%	1	4.2%	8	10.8%	1	20.0%
Ընդամենը	**531**	**100.0%**	**166**	**100.0%**	**365**	**100.0%**	**22**	**100.0%**	**3**	**100.0%**	**5**	**100.0%**	**24**	**100.0%**	**74**	**100.0%**	**5**	**100.0%**

Պատասխան	Ընդամենը հարցվածներ		ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ				SUS		ԿՍԿ		Բիսեքսուալ		ԿՍ		ԹՕ		ՏԳ	
			Իգական		Արական													
	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%
Երբևէ այլ մարդիկ (բացի ընտանիքի անդամներից) խտրական դիտողություններ կամ բամբասանքներ հնչեցրե՞լ են Ձեր հասցեին Ձեր ՄԻԱՎ կարգավիճակի պատճառով:																		
Այո, վերջին 12 ամիսների ընթացքում	2	0.4%	2	1.2%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%
Այո, բայց ոչ վերջին 12 ամիսների ընթացքում	27	5.1%	11	6.6%	16	4.4%	3	13.6%	1	**33.3%**	0	0.0%	6	**25.0%**	4	5.4%	0	0.0%
Ոչ	473	89.1%	143	86.1%	330	90.4%	19	86.4%	2	66.7%	4	80.0%	17	70.8%	62	83.8%	4	80.0%
Դժ. պատ.	29	5.5%	10	6.0%	19	5.2%	0	0.0%	0	0.0%	1	20.0%	1	4.2%	8	10.8%	1	20.0%
Ընդամենը	**531**	**100.0%**	**166**	**100.0%**	**365**	**100.0%**	**22**	**100.0%**	**3**	**100.0%**	**5**	**100.0%**	**24**	**100.0%**	**74**	**100.0%**	**5**	**100.0%**

3.3 ՆԵՐՔԻՆ ԽԱՐԱՆ

Հետազոտության արդյունքների համաձայն՝ ՄԻԱՎ-ով ապրող մարդու կարգավիճակը որոշակիորեն անդրադառնում է տարբեր պահանջներ բավարարելու իր ունակության վրա, և այդ ազդեցությունը ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց տարբեր խմբերի մոտ տարբեր կերպ է դրսևորվում:

Մարդու ՄԻԱՎ դրական կարգավիճակն ամենաքիչ ազդեցությունն է ունեցել ուրիշներին հարգելու ունակության, համայնքին աջակցելու ընդունակության, ինչպես նաև որևէ կրոնի/հավատքի դավանելու ընդունակության վրա, համապատասխանաբար 3.6%, 3.2% և 2.4%: Ավելին, հարցվածների երկու երրորդը (77.3%) նշել է, որ ՄԻԱՎ դրական կարգավիճակը ազդեցություն չի ունեցել դրանց վրա, այնինչ ՄԻԱՎ դրական կարգավիճակը բացասաբար է ազդել այն ունակությունների վրա, որոնք վերաբերում են սթրեսի հաղթահարմանը (29.8%), ինքնավստահությանը (32.4%) և երեխաներ ունենալու ցանկությանը (15.6%) (տե՛ս Հավելված I):

Հարկ է նշել, որ ըստ հետազոտության տվյալների՝ ԿՍԿ-ները, SUS-ները և ՏԳ-ներն առավել խոցելի են եղել ՄԻԱՎ-ի բացասական ազդեցության տեսանկյունից: Հատկապես կանայք, ԿՍԿ խումբը, ինչպես նաև SUS-ները նշել են, որ ՄԻԱՎ դրական կարգավիճակը բացասաբար է ազդել սթրեսը հաղթահարելու իրենց ունակության և իրենց ինքնավստահության վրա: Ըստ ստորև բերված աղյուսակների՝ հետազոտությանը մասնակցած կանանց մոտ այս ցուցանիշներն ավելի բարձր են եղել, քան տղամարդկանց մոտ:

Աղյուսակ 20. ՄԻԱՎ կարգավիճակի ազդեցությունը սթրեսը հաղթահարելու ունակության վրա (Դատողություն 1)՝ ըստ սեռի, n=531

Պատասխան	Ընդամենը հարցվածներ		ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ			
			Իգական		MEN	
	n	%	n	%	n	%
Դատողություն 1: Սթրեսը հաղթահարելու իմ ունակությունը						
ՄԻԱՎ կարգավիճակը դրական ազդեցություն է թողել	23	4.3%	11	6.6%	12	3.3%
ՄԻԱՎ կարգավիճակը ոչ մի կերպ չի ազդել	329	62.0%	94	56.6%	235	64.4%
ՄԻԱՎ կարգավիճակը բացասական ազդեցություն է թողել	158	**29.8%**	56	33.7%	102	27.9%
Դժ. պատ.	21	4.0%	5	3.0%	16	4.4%
Ընդամենը	**531**	**100.0%**	**166**	**100.0%**	**365**	**100.0%**

Աղյուսակ 21. ՄԻԱՎ կարգավիճակի ազդեցությունը սթրեսը հաղթահարելու ունակության վրա (Դատողություն 1)՝ ըստ առանցքային և խոցելի համախմբությունների

Պատասխան	SUS		ԿՍԿ		Բիսեքսուալ		ԿՍ		ԹՕ		ՏԳ	
	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%
Դատողություն 1: Սթրեսը հաղթահարելու իմ ունակությունը												
ՄԻԱՎ կարգավիճակը դրական ազդեցություն է թողել	1	4.5%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	2	2.7%	0	0.0%
ՄԻԱՎ կարգավիճակը ոչ մի կերպ չի ազդել	10	45.5%	0	0.0%	5	100.0%	14	58.3%	43	58.1%	2	40.0%

ՄԻԱՎ կարգավիճակը բացասական ազդեցություն է թողել	10	**45.5%**	3	**100.0%**	0	0.0%	9	37.5%	23	31.1%	2	40.0%
Դժ. պատ.	1	4.5%	0	0.0%	0	0.0%	1	4.2%	6	8.1%	1	20.0%
Ընդամենը	**22**	**100.0%**	**3**	**100.0%**	**5**	**100.0%**	**24**	**100.0%**	**74**	**100.0%**	**5**	**100.0%**

Աղյուսակ 22. ՄԻԱՎ կարգավիճակի ազդեցությունը ինքնավստահության վրա (Դատողություն 1)՝ ըստ սեռի, n=531

Պատասխան	Ընդամենը հարցվածներ		ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ			
			Իգական		Արական	
	n	%	n	%	n	%
Դատողություն 2: Իմ ինքնավստահությունը						
ՄԻԱՎ կարգավիճակը դրական ազդեցություն է թողել	15	2.8%	6	3.6%	9	2.5%
ՄԻԱՎ կարգավիճակը ոչ մի կերպ չի ազդել	314	59.1%	91	54.8%	223	61.1%
ՄԻԱՎ կարգավիճակը բացասական ազդեցություն է թողել	172	**32.4%**	61	36.7%	111	30.4%
Դժ. պատ.	30	5.6%	8	4.8%	22	6.0%
Ընդամենը	**531**	**100.0%**	**166**	**100.0%**	**365**	**100.0%**

Աղյուսակ 23. ՄԻԱՎ կարգավիճակի ազդեցությունը ինքնավստահության վրա (Դատողություն 1)՝ ըստ առանցքային և խոցելի համախմբությունների

Պատասխան	SUS		ԿՍԿ		Բիսեքսուալ		ԿՍ		ԹՕ		ՏԳ	
	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%
Դատողություն 2: Իմ ինքնավստահությունը												
ՄԻԱՎ կարգավիճակը դրական ազդեցություն է թողել	0	0.0%	0	0.0%	1	20.0%	1	4.2%	2	2.7%	0	0.0%
ՄԻԱՎ կարգավիճակը ոչ մի կերպ չի ազդել	7	31.8%	1	33.3%	2	40.0%	13	54.2%	44	59.5%	2	40.0%
ՄԻԱՎ կարգավիճակը բացասական ազդեցություն է թողել	15	**68.2%**	2	**66.7%**	2	40.0%	8	33.3%	21	28.4%	2	40.0%
Դժ. պատ.	0	0.0%	0	0.0%	0	0.0%	2	8.3%	7	9.5%	1	20.0%
Ընդամենը	**22**	**100.0%**	**3**	**100.0%**	**5**	**100.0%**	**24**	**100.0%**	**74**	**100.0%**	**5**	**100.0%**

Վերոնշյալ բաղադրիչի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Հավելված 1-ում:

Հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց մեծամասնությունը (98.5%) վերջին 12 ամսվա ընթացքում որևէ փոփոխություն չի նկատել իր ունակությունների հարցում՝ ուղղված տարբեր կարիքների բավարարմանը: Ավելին, հարցվածների 7.9%-ը նշել է, ՄԻԱՎ կարգավիճակի ազդեցությունը վատ է անդրադարձել, իսկ 21.8%-ը համարել է, որ այդ ազդեցությունը լավ է անդրադարձել կարիքները բավարարմանը:

Հետազոտությունը դիտարկել է նաև վերջին 12 ամիսների ընթացքում ՄԻԱՎ կարգավիճակի ազդեցության հարցը ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց գործողությունների վրա: Արդյունքների համաձայն՝ յուրաքանչյուր հինգերորդ ՄԻԱՎ-ով ապրող մարդը խուսափել է կլինիկա կամ հիվանդանոց գնալուց, երբ դրա կարիքն ունեցել է (17.9%), յուրաքանչյուր յոթերորդը որոշել է չմասնակցել սոցիալական հավաքների (14.1%), և յուրաքանչյուր ութերորդը որոշել է չունենալ սեռական հարաբերություններ (11.9%) և չդիմել սոցիալական աջակցության (11.7%):

Աղյուսակ 24. Վերջին 12 ամիսների ընթացքում ՄԻԱՎ կարգավիճակով պայմանավորված գործողություններն՝ ըստ սեռի, առանցքային և խոցելի համախմբությունների

Պատասխան	Ընդամենը հարցվածներ		ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ				SUS		ԿՍԿ		Բիսեքսուալ		ԿՍ		ԹՕ		ՏԳ	
			Իգական		Արական													
	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%
Ես նախընտրել եմ չգնալ սոցիալական հավաքույթների																		
Այո	75	**14.1%**	26	15.7%	49	13.4%	3	13.6%	2	**66.7%**	0	0.0%	6	**25.0%**	8	10.8%	1	**20.0%**
Ոչ	421	79.3%	134	80.7%	287	78.6%	18	81.8%	1	33.3%	5	100.0%	17	70.8%	57	77.0%	3	60.0%
Վերաբերելի չէ	35	6.6%	6	3.6%	29	7.9%	1	4.5%	0	0.0%	0	0.0%	1	4.2%	9	12.2%	1	20.0%
Ընդամենը	**531**	**100.0%**	**166**	**100.0%**	**365**	**100.0%**	**22**	**100.0%**	**3**	**100.0%**	**5**	**100.0%**	**24**	**100.0%**	**74**	**100.0%**	**5**	**100.0%**
Պատասխան	**Ընդամենը հարցվածներ**		**ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ**				**SUS**		**ԿՍԿ**		**Բիսեքսուալ**		**ԿՍ**		**ԹՕ**		**ՏԳ**	
			Իգական		**Արական**													
	n	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**
Ես խուսափել եմ կլինիկա կամ հիվանդանոց գնալուց, երբ դրա կարիքն ունեի																		
Այո	95	**17.9%**	31	18.7%	64	17.5%	7	**31.8%**	2	**66.7%**	0	0.0%	5	20.8%	9	12.2%	0	0.0%
Ոչ	435	81.9%	135	81.3%	300	82.2%	15	68.2%	1	33.3%	5	100.0%	19	79.2%	65	87.8%	5	100.0%
Վերաբերելի չէ	1	0.2%	0	0.0%	1	0.3%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%
Ընդամենը	**531**	**100.0%**	**166**	**100.0%**	**365**	**100.0%**	**22**	**100.0%**	**3**	**100.0%**	**5**	**100.0%**	**24**	**100.0%**	**74**	**100.0%**	**5**	**100.0%**
Պատասխան	**Ընդամենը հարցվածներ**		**ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ**				**SUS**		**ԿՍԿ**		**Բիսեքսուալ**		**ԿՍ**		**ԹՕ**		**ՏԳ**	
			Իգական		**Արական**													
	n	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**
Ես նախընտրել եմ չդիմել աշխատանք(ներ)ի																		
Այո	35	6.6%	10	6.0%	25	6.8%	1	4.5%	0	0.0%	0	0.0%	3	12.5%	10	13.5%	1	**20.0%**
Ոչ	486	91.5%	155	93.4%	331	90.7%	21	95.5%	3	100.0%	5	100.0%	21	87.5%	63	85.1%	4	80.0%
Վերաբերելի չէ	10	1.9%	1	0.6%	9	2.5%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	1	1.4%	0	0.0%
Ընդամենը	**531**	**100.0%**	**166**	**100.0%**	**365**	**100.0%**	**22**	**100.0%**	**3**	**100.0%**	**5**	**100.0%**	**24**	**100.0%**	**74**	**100.0%**	**5**	**100.0%**
Պատասխան	**Ընդամենը հարցվածներ**		**ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ**				**SUS**		**ԿՍԿ**		**Բիսեքսուալ**		**ԿՍ**		**ԹՕ**		**ՏԳ**	
			Իգական		**Արական**													
	n	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**
Ես նախընտրել եմ չփնտրել սոցիալական աջակցություն																		
Այո	62	11.7%	11	6.6%	51	14.0%	7	**31.8%**	0	0.0%	1	20.0%	3	12.5%	5	6.8%	0	0.0%
Ոչ	455	85.7%	154	92.8%	301	82.5%	13	59.1%	3	100.0%	4	80.0%	20	83.3%	66	89.2%	4	80.0%
Վերաբերելի չէ	14	2.6%	1	0.6%	13	3.6%	2	9.1%	0	0.0%	0	0.0%	1	4.2%	3	4.1%	1	20.0%
Ընդամենը	**531**	**100.0%**	**166**	**100.0%**	**365**	**100.0%**	**22**	**100.0%**	**3**	**100.0%**	**5**	**100.0%**	**24**	**100.0%**	**74**	**100.0%**	**5**	**100.0%**
Պատասխան	**Ընդամենը**		**ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ**				**SUS**		**ԿՍԿ**		**Բիսեքսուալ**		**ԿՍ**		**ԹՕ**		**ՏԳ**	

	հարցվածներ		Իգական		Արական													
	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%
Ես մեկուսացել եմ իմ ընտանիքից և/կամ ընկերներից																		
Այո	41	7.7%	13	7.8%	28	7.7%	4	18.2%	1	**33.3%**	0	0.0%	3	12.5%	11	14.9%	1	**20.0%**
Ոչ	485	91.3%	150	90.4%	335	91.8%	18	81.8%	2	66.7%	5	100.0%	21	87.5%	63	85.1%	4	80.0%
Վերաբերելի չէ	5	0.9%	3	1.8%	2	0.5%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%
Ընդամենը	**531**	**100.0%**	**166**	**100.0%**	**365**	**100.0%**	**22**	**100.0%**	**3**	**100.0%**	**5**	**100.0%**	**24**	**100.0%**	**74**	**100.0%**	**5**	**100.0%**
Պատասխան	**Ընդամենը հարցվածներ**		**ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ**				**SUS**		**ԿՍԿ**		**Բիսեքսուալ**		**ԿՍ**		**ԹՕ**		**ՏԳ**	
			Իգական		**Արական**													
	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%
Ես որոշել եմ չունենալ սեռական հարաբերություններ																		
Այո	63	11.9%	31	18.7%	32	8.8%	5	22.7%	1	33.3%	0	0.0%	3	12.5%	9	12.2%	0	0.0%
Ոչ	456	85.9%	127	76.5%	329	90.1%	17	77.3%	2	66.7%	4	80.0%	20	83.3%	65	87.8%	5	100.0%
Վերաբերելի չէ	12	2.3%	8	4.8%	4	1.1%	0	0.0%	0	0.0%	1	20.0%	1	4.2%	0	0.0%	0	0.0%
Ընդամենը	**531**	**100.0%**	**166**	**100.0%**	**365**	**100.0%**	**22**	**100.0%**	**3**	**100.0%**	**5**	**100.0%**	**24**	**100.0%**	**74**	**100.0%**	**5**	**100.0%**

Ըստ հետազոտության արդյունքների՝ ՀՀ-ում միջին վիճակագրական ՄԻԱՎ-ով ապրող մարդը միջին տարիքի տղամարդն է (40-49 տարեկան), ընդ որում, այս խմբի երկու երրորդն **ամուսնացած է** կամ

ինտիմ հարաբերությունների մեջ է և **ունի մեկ երեխա**: Նրանք ունեն **միջնակարգ կրթություն**, **աշխատանք**, բայց երբեմն **չեն կարողանում բավարարել իրենց հիմնական կարիքները: Նրանք պարբերաբար բուժում են ստանում** և հազվադեպ են ընդհատում այն՝ վախենալով, որ ինչ-որ մեկը կիմանա իրենց ՄԻԱՎ կարգավիճակի մասին: Նրանք **դժվարանում են խոսել իրենց կարգավիճակի մասին** ուրիշների հետ և **ավելի շատ աջակցություն են ստանում իրենց համայնքի ներկայացուցիչների**, քան իրենց ընտանիքների կամ մերձավորների կողմից:

Յուրաքանչյուր երրորդ ՄԻԱՎ-ով ապրող մարդ **չի ունեցել դրական փորձառություն իր կարգավիճակը հարազատներին և մտերիմ մարդկանց բացահայտելիս:** Հարցվածների միայն շուրջ 42%-ն է ունեցել բացահայտման դրական փորձառություն իր մտերիմ շրջապատում (ընտանիք, գործընկերներ, ընկերներ և այլն): Հետազոտության արդյունքները ցույց է տալիս, որ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց գրեթե յուրաքանչյուր հինգերորդը խոստովանել է, որ վախի կամ այլ մարդկանց արձագանքի պատճառով՝ որոշել են հետաձգել ՄԻԱՎ-ի թեստավորումը՝ մտածելով, որ միգուցե իրենք կունենան ՄԻԱՎ դրական կարգավիճակը փաստող ախտորոշում:

Վերոնշյալի համաձայն, **կանայք ավելի հաճախ են նշում խարանի և խտրականության փորձառության մասին:** Կանանց կեսից ավելին նշել է, որ չեն կարողացել իրագործել անձնական և մասնագիտական նպատակները: Նրանց համար ավելի դժվար է եղել խոսել իրենց կարգավիճակի մասին և դրանով պայմանավորված՝ նրանք ամենաշատն են ունեցել ամոթի զգացում: Միևնույն ժամանակ, նրանք ավելի պակաս տեղեկացված են իրենց վիրուսային ծանրաբեռնվածության մասին, քան մյուսները:

Հետազոտությունը հավասարապես ցույց է տալիս, որ **գրեթե բոլոր ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ հակված են թաքցնել իրենց կարգավիճակը այլ մարդկանցից**, հատկապես ՏԳ-ները, SUS-ներն ու ԿՍԿ-ները: ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց կեսից ավելին ՄԻԱՎ դրական կարգավիճակի պատճառով իրենց արժեզրկված են զգում և շատերն ամաչում են դրանից: Զգալի մեծամասնության համար դժվար է իր կարգավիճակի մասին ուրիշներին պատմելը:

Ըստ հետազոտության տվյալների, ընդհանուր առմամբ, ՄԻԱՎ-ով ապրող **մարդկանց 64%-ը որոշել է անցնել թեստավորում վեց ամսում կամ ավելի պակաս** ժամանակում այն պահից սկսած, երբ առաջին անգամ այդ միտքը ծագել է իրենց մոտ: Այս ցուցանիշն ավելի բարձր է եղել ԿՍԿ-ների (81.3%), SUS-ների (77.8%) և ԹՕ-ների (69.4%) շրջանում, մինչդեռ ՄԻԱՎ-ով ապրող ամեն երկրորդ մարդը նշել է, որ իրենք որոշել են հետաձգել ՄԻԱՎ թեստավորումը՝ վախենալով մյուսների արձագանքից, եթե բացահայտվի, որ ունեն ՄԻԱՎ դրական կարգավիճակ:

Ընդհանրապես, **ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց 82.5%-ը նշել է, որ իրենք բաց չեն թողել ՀՌՎ բուժումը** վախի պատճառով, որ ինչ-որ մեկը կիմանա իրենց կարգավիճակի մասին: Ավելին, ՏԳ-ների և ԿՍ-ների շրջանում այս ցուցանիշը զգալիորեն տարբեր է (37.5% և 33.3%). այս խմբերի յուրաքանչյուր երրորդ ներկայացուցիչը բաց է թողել ՀՌՎ դեղորայքի ընդունումը՝ վախենալով, որ ինչ-որ մեկը կիմանա իրենց կարգավիճակի մասին:

Միջինում **յուրաքանչյուր չորրորդ ՄԻԱՎ-ով ապրող մարդ ընդհատել է բուժումը ՄԻԱՎ կարգավիճակի վերաբերյալ որևէ բան անելու պատրաստակամության բացակայության պատճառով**, մինչդեռ կանանց և ԿՍ-ների մոտ այս պատճառը վերաբերելի է մոտավորապես մեկ

երրորդին: Բոլոր ՏԳ-ները նշել են, որ ընդհատել են իրենց բուժումը՝ բուժաշխատողների (բժիշկներ, բուժքույրեր, անձնակազմ) վատ վերաբերմունքից խուսափելու նպատակով:

Հետազոտության տվյալները վկայում են, որ **տարբեր հիվանդությունների նկատմամբ առավել հակվածություն ունեն ԹՕ-ները, ԿՍԿ-ները և բիսեքսուալները**: Օրինակ, գրեթե յուրաքանչյուր չորրորդ ԹՕ տառապում է վիրուսային հեպատիտից, ալկոհոլից/թմրամիջոցներից կախվածության համախտանիշից, ունի հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ և օպորտունիստական վարակներ: Հարցման մեջ նշված բոլոր խմբերի յուրաքանչյուր տասներորդ ներկայացուցիչ հայտնել է ոչ վարակիչ հիվանդությունների և օպորտունիստական վարակների նկատմամբ իր խոցելիության մասին:

Բուժման ընդհատման կամ դադարեցման խարանի և խտրականության հետ առնչություն չունեցող պատճառների թվում հետազոտության յուրաքանչյուր վեցերորդ մասնակից մատնանշել է **դրա կողմնակի ազդեցությունների և բուժման անհրաժեշտության բացակայության մասին**: Հատկապես ՄԻԱՎ-ով ապրող բոլոր SUS-ները ընդհատել են իրենց բուժումը, քանի որ համարել են, որ դրա կարիքը չկա:

Ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ բոլոր ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ **ՀՌՎ բուժում ստանում են միայն պետական կլինիկայում՝ ԻՀԱԿ-ում:** Յուրաքանչյուր երկրորդ SUS-ն և այլ խմբերի ներկայացուցիչների մեկ երրորդը տեղեկացված էր ՄԻԱՎ-ին առնչվող ծառայություններ մատուցող համայնքային կլինիկաների մասին և ուներ հասանելիություն այդ ծառայություններին:

Հատկանշական է, որ ըստ **ԿՍ-ների 4.3%-ի՝ բժշկական անձնակազմը խուսափել է նրանց հետ ֆիզիկական շփումից և լրացուցիչ նախազգուշական միջոցներ է ձեռնարկել իրենց ՄԻԱՎ դրական կարգավիճակով պայմանավորված** և սա այն դեպքում, երբ ԿՍ-ների 75%-ը չի հայտնել իր կարգավիճակի մասին ընդհանուր բժշկական ծառայությունների դիմելիս, որտեղ նրանք ստանում են ՀՌՎ բուժում:

Բանավոր ոտնձգության ենթարկվելը առանցքային համախմբության ներկայացուցիչների կողմից ապրած խտրականության ամենատարածված ձևն է՝ ըստ հարցման տվյալների: ՄԻԱՎ-ով ապրող կանայք, բառացիորեն, բռնության են ենթարկվել իրենց ՄԻԱՎ կարգավիճակի պատճառով 5 անգամ ավելի հաճախ, քան ՄԻԱՎ-ով ապրող տղամարդիկ: Միևնույն ժամանակ ԿՍԿ-ների մեկ երրորդը և ԿՍ-ների ու ՏԳ-ների մոտավորապես մեկ հինգերորդը բժշկական հաստատություններում նույնպես ենթարկվել են խոսքային բռնության, առնչվել խտրական դիտողությունների և բամբասանքի՝ իրենց ՄԻԱՎ կարգավիճակով պայմանավորված: Այս ամենին զուգահեռ, հարցվածների գրեթե մեկ հինգերորդը հակված է եղել բացահայտելու իր ՄԻԱՎ դրական կարգավիճակը, երբ այցելել են ոչ ՀՌՎ բուժում տրամադրող կլինիկաներ:

ՏԳ-ների կեսից ավելին հայտնել է, որ դուրս են մնացել ընտանեկան միջոցառումներից և ենթարկվել են ոտնձգությունների ու ֆիզիկական բռնության՝ իրենց գենդերային ինքնության պատճառով: Չորսից երեքը ենթարկվել են բանավոր ոտնձգության և շանտաժի: Հարկ է նշել, որ ՏԳ-ներն ավելի հաճախ են ենթարկվում խարանի և խտրականության իրենց գենդերային նույնականացմամբ պայմանավորված, քան մյուս խմբերի ներկայացուցիչները: Բացի այդ, հարցման ընթացքում

պարզվել է, որ ՏԳ-ները հակված չեն բացահայտելու իրենց գենդերային նույնականացումը իրենց բժշկական փաստաթղթերում:

Կարելի է եզրակացնել, որ **խարանն ու խտրականությունը Հայաստանում լայնորեն տարածված երևույթ են ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում**: Ներքին խարանն իր «կարծրությամբ» խստապես ազդում է կանանց և առանցքային համախմբությունների ներկայացուցիչների վրա, որոնք Հայաստանում չեն կարողանում ինքնաիրականացվել նաև աշխատաշուկայում: ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ չեն կարող լինել ընդունված և աջակցություն ստանալ անգամ հարազատ միջավայրից իրենց կարգավիճակի և/կամ գենդերային նույնականացման պատճառով: Վերջին տարիներին խարանն ու խտրականությունը կառուցվածքային ձև են ստացել ՄԻԱՎ-ի փոխանցման քրեականացման պատճառով: Որոշ դեպքերում բացահայտվել են նաև ոստիկանության կողմից սպառնալիքներ և ոտնձգություններ: Արդարադատության հասանելիությունը կարելի է դիտարկել որպես ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց, մասնավորապես՝ առանցքային համախմբության ներկայացուցիչների համար լուրջ մտահոգություն: Հետազոտության արդյունքների համաձայն՝ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց մեծ մասը տեղյակ չէր իրենց իրավունքները պաշտպանող ՀՀ օրենքների վերաբերյալ. հարցվածների միայն մեկ չորրորդն է նշել, որ տեղյակ է համանման օրենքներից: Առանց ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց համաձայնության իրականացված բազմաթիվ ՄԻԱՎ թեստավորումները խոսում են այն մարտահրավերների մասին, որոնք առաջանում են բուժաշխատողների կողմից էթիկայի կանոնները պահպանելու և մարդու իրավունքները հարգելու հրամայականի անտեսումից:

Այն փաստը, որ բոլոր ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ ցանկանում են թաքցնել իրենց կարգավիճակը և սեռական կողմնորոշումը մյուսներից, **փաստում է նրանց վստահության ցածր մակարդակի մասին իրենց անմիջական միջավայրի, առողջապահական համակարգի, սոցիալական ծառայությունների և, ընդհանուր առմամբ, ողջ հասարակության նկատմամբ:** Սա վկայում է սոցիալական և վարքագծային փոփոխության գործողությունների շարունակական, նպատակային միջոցառումների իրականացման անհրաժեշտության մասին, որոնք ակնհայտորեն չպետք է սահմանափակվեն միայն իրազեկման արշավներով:

<u>Հետազոտության սահմանափակումները</u>

Հետազոտության արդյունքների արտաքին կիրառելիությունը հետազոտության մեջ **թերներկայացված խմբերի** համար (ՏԳ, SUS, ԿՍԿ, ԿՍ, ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ, ովքեր դուրս են եղել խնամքից և բուժումից) պետք է դիտարկել որպես հետազոտության սահմանափակում:

Տվյալների հավաքագրման գործընթացում առաջացել են որոշակի խոչընդոտներ, որոնք որոշ չափով սահմանափակել են դաշտային աշխատանքները և ազդել ընտրանքի կառուցվածքի վրա, սակայն այդ մարտահրավերները որևէ կերպով չեն ազդել հավաքագրված տվյալների որակի և հուսալիության վրա: Տարբեր գործոններով պայմանավորված՝ հետազոտության սահմանափակումները կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

ա) Տեխնիկական և կազմակերպչական հարցեր

Թեև պլանավորված 531 հարցազրույցները ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հետ իրականացվել են ամբողջությամբ, սակայն հնարավոր չի եղել հասնել ԿՍ և SUS խմբերի ցանկալի թվին (30 հարցազրույցներից իրականացվել են, համապատասխանաբար, 24 և 22 մասնակիցների հետ)՝ ինչպես սահմանված էր հաշվարկված ընտրանքի չափով: Դա սահմանափակել է այս խմբերի համար բացահայտումների ընդհանրացումը: Այնուամենայնիվ, այս խնդիրը մասամբ լուծվել է նպատակաուղղված, առավելագույն տատանումների ընտրանքի մեթոդի կիրառմամբ, որը թույլ է տվել հետազոտության ընթացքում հավաքագրել զանազան բնութագրերով մասնակիցների:

Դրանից զատ, տվյալների հավաքագրման փուլում գրանցվել է 297 մերժում հարցազրույցի հավանական մասնակիցների կողմից: Հետևաբար, նպատակային թվին հասնելու համար նախատեսվածից ավելի մեծ թվով հարցազրույցներ են իրականացվել Երևանում և մյուս երկու մարզերում:

Հարկ է նշել, որ ԿՍԿ-ները և բիսեքսուալները չեն եղել պաշտոնական վիճակագրության մեջ և դրանք բնութագրված են եղել որպես փակ համայնք: Հետազոտության շրջանակում հաջողվել է հասնել այս խմբերին համայնքի վերապատրաստված անդամների միջոցով: Նաև ՏԳ-ների, ԿՍԿ-ների և բիսեքսուալների խմբերից հետազոտության մասնակիցների թիվը չափազանց փոքր է եղել՝ այս խմբերին վերաբերող արդյունքներն ընդհանրացնելու համար: Այսպիսով, լրացուցիչ որակական հետազոտություն է անհրաժեշտ իրականացնել Հայաստանում՝ այս խմբերի նկատմամբ խարանի և խտրականության փորձառության վերաբերյալ ավելի համապարփակ պատկերացում ունենալու համար:

Հետազոտության արդյունքները չեն կարող ընդհանրացվել Հայաստանում ՄԻԱՎ-ով ապրող բոլոր մարդկանց համար, քանի որ ընտրանքը ներառել է 3 բնակավայրեր՝ Երևան, Վանաձոր և Գյումրի: Այս առումով նպատակահարմար կլինի, որ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց խարանի ինդեքսի հաջորդ հետազոտությունն իրականացվի ավելի մեծ ընտրանքով, որը կընդգրկի ՀՀ ողջ տարածքը:

բ) Էթիկական խնդիրներ

Որոշ դեպքերում հարցվողների ընտանիքի անդամները (ամուսիններ և սկեսուրներ) ցանկություն են հայտնել ներկա գտնվել դեմ առ դեմ հարցումներին: Նման դեպքերում դաշտային աշխատողները զգուշավոր մոտեցում են ցուցաբերել՝ ներկայացնելով հետազոտությունը որպես պարզապես սոցիալ-ժողովրդագրական տվյալների հավաքագրում կամ երիտասարդ կանանց առջև ծառացած խնդիրների ուսումնասիրություն՝ առանց հարցման հիմնական թեմատիկ ուղղվածությունը բացահայտելու, այնպես, որ հարցվողները կարող են պատասխանել հարցերին առանց իրենց ընտանիքի անդամների վերահսկողության:

Եղել են դեպքեր, երբ հարցվողների ընտանիքի անդամները տեղյակ չեն եղել իրենց ՄԻԱՎ կարգավիճակի մասին: Այդ իսկ պատճառով դաշտային աշխատողները ձեռնպահ են մնացել ներկայանալուց, ինչպես նաև ուսումնասիրության նպատակը ներկայացնելուց: Խնդիրներից խուսափելու համար ընտանիքի անդամներին ասել են, որ այցը կապված է մարդասիրական օգնության ծրագրի հետ:

Միևնույն ժամանակ, դաշտային աշխատողները հարցումն անցկացնելուց առաջ ցուցաբերել են ճկունություն, պրոֆեսիոնալիզմ և զգայունություն հարցվողների նկատմամբ՝ առաջնահերթություն

տալով նրանց հարմարավետությանը, կարիքներին և հաշվի առնելով այն հանգամանքը, թե արդյոք նրանց հարմար է մասնակցել հարցազրույցին: Մի քանի դեպքերում հարցածների խնդրանքով հարցումներ են անցկացվել հասարակական վայրերում՝ այգիներում, բակերքւմ և նույնիսկ ավտոմեքենաներում:

գ) Հոգեբանական խնդիրներ

Որոշ հարցվածներ էմոցիոնալ կերպով են արձագանքել դեմ առ դեմ հարցումների ընթացքում իրենց փորձառությունները ներկայացնելիս և վերապրելիս: Դաշտային աշխատողները հարցազրույցների ընթացքում ընդմիջումներ են առաջարկել, որոնք հետո երկարացրել են հարցազրույցի տևողությունը:

դ) Սոցիալական և տնտեսական խնդիրներ

Հարցմանը մասնակցելու համար գրասենյակ հրավիրված որոշ մասնակիցներ չեն կարողացել ներկայանալ տրանսպորտային ծախսերի հետ կապված ֆինանսական դժվարությունների պատճառով: Հարցվողների մի խումբ էլ չի կարողացել մասնակցել, քանի որ ստիպված է եղել տանը մնալ անչափահասների խնամքի հարցերով, կամ ընտանիքի անդամներից թույլտվություն չեն ստացել տանից դուրս գալու համար: Նման դեպքերում դաշտային աշխատողներն այցելել են հարցվողներին իրենց իսկ տներում, որպեսզի հասնեն հարցումների թիրախային թվին և ապահովեն հավասարաչափ բաշխում մարզերի միջև:

5. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՇԱՀԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ

Այսպիսով՝ իրականացված հետազոտության հիմնական արդյունքների հաշվառմամբ և ադվոկացիոն աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով անհրաժեշտ է առաջ քաշել հետևյալ գործնական առաջարկություններն՝ ուղղված ՀՀ կառավարությանը և նախարարություններին (ԱՆ, ԱրՆ, ԱՍՀՆ, ԿԳՄՍ), ԻՀԱԿ-ին, տեղական և միջազգային ՀԿ-ներին, ինչպես նաև ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց Կենտրոնական Ասիայի ցանցին:

1. ԱՆԴՐԱԴԱՐՁ ԻՐԱՎԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻՆ (առաջարկություններ՝ ուղղված կառավարությանը, տեղական և միջազգային ՀԿ-ներին)

Անհրաժեշտ է հնարավորինս շուտ նախաձեռնել քաղաքական երկխոսություն ՄԻԱՎ վարակի ապաքրեականացման, ինչպես նաև դրանից բխող այլ քաղաքականություններին առնչվող սահմանափակումների շուրջ, որոնք հանգեցնում են ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց իրավունքների ոտնահարմանը: Բաց երկխոսությունը պետք է ընդգրկի մարդու իրավունքներին առնչվող գործող քաղաքականության հետևանքների ապացույցները և ավարտվի բոլոր շահագրգիռ կողմերի հետ սերտ համագործակցությամբ՝ մշակված այլընտրանքային քաղաքականության տարբերակներով: Կանանց և առանցքային համախմբությունների ներկայացուցիչների նկատմամբ խարանի և խտրականության բարձր խոցելիության թեման պետք է ներառվի քաղաքականության օրակարգում՝ ընդգրկելով բոլոր ոլորտները (կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն, զբաղվածություն, արդարադատություն) և պետք է լուծվի համակարգված կերպով՝ հաշվի առնելով անհրաժեշտ օրենսդրական, ծրագրային, վարչական և ֆինանսական կարգավորումները:

ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ԱՊԱՔՐԵԱԿԱՆԱՑՈՒՄ

1.1 Առողջապահության նախարարության, Ոստիկանության, Գլխավոր դատախազության, միջազգային կազմակերպությունների, ՀԿ-ների և ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց համայնքների ներգրավվածությամբ անցկացնել բարձր մակարդակի հանդիպում՝ երկրում ՄԻԱՎ-ի փոխանցման կամ վարակման վտանգի ենթարկելու քրեականացման ազդեցությունը դիտարկելու նպատակով: ՀՀ Քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում ՄԻԱՎ-ի փոխանցման համար: Մեկ այլ անձի ՄԻԱՎ-ով վարակելը պատժվում է մինչև 5 տարի ազատազրկմամբ: Սակայն պետք է նշել, որ Հայաստանում այս օրենքի կիրառումը սահմանափակ է եղել, և վերջին 5 տարիների ընթացքում հանրապետությունում ՄԻԱՎ-ի փոխանցման համար ազատազրկման դեպքեր չեն գրանցվել, այլ միայն հարուցվել է մի քանի քրեական գործ: Այնուամենայնիվ, նման օրենքի գոյությունը նպաստում է ՄԻԱՎ-ի նկատմամբ խարանի և խտրականության ավելացմանը և խոչընդոտում է մարդկանց դիմելու ՄԻԱՎ թեստավորման և բուժման:

1.2 Համակարգված կերպով կազմակերպել ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց իրավունքների վերաբերյալ կարողությունները զարգացնող դասընթացներ դատավորների, ոստիկանների և դատախազության ներկայացուցիչների համար՝ դիտարկելով այն մարդու միջազգային իրավունքների և ՄԻԱՎ-ի չափանիշների համատեքստում, հաշվի առնելով նաև գենդերային ասպեկտները:

1.3 Պետական կառույցների ներքին կանոնակարգերում ներառել ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հանդեպ խարանի և խտրականության բացառման էթիկական պահանջներ:

2. ԶՈՐԵՂԱՑՈՒՄ՝ ԸՆԴԴԵՄ ՆԵՐՔԻՆ ԽԱՐԱՆԻ (առաջարկություններ՝ ուղղված կառավարությանը, տեղական և միջազգային ՀԿ-ներին, ԻՀԱԿ-ին)

Հաշվի առնելով մշտապես ուղեկցվող ներքին խարանը, ինչպես նաև ՄԻԱՎ-ի խնամքի, բուժման և թեստավորման մատչելիությունը, կարևոր է բարձրացնել որակյալ սոցիալական (ոչ բժշկական) ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունը ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հոգեկան, սոցիալական և տնտեսական խնդիրների լուծման նպատակով, մասնավորապես՝ կանանց և առանցքային համախմբությունների ներկայացուցիչների շրջանում: ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց (սոցիալական և տնտեսական) զորեղացման հաջողված պրակտիկան, որը դրսևորվել է այլ երկրներում, պետք է հետագա գնահատում և ընդլայնում ստանա՝ հաշվի առնելով սոցիալական պաշտպանության մեխանիզմների միջոցով դրանց հետագա ինստիտուցիոնալացումը:

Անհրաժեշտ է տեղական մակարդակով գնահատել միջգերատեսչական համակարգման մեխանիզմների արդյունավետությունը՝ ուղղված ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց խոցելիության հիմնահարցերի լուծմանը, և բացահայտել այդ մեխանիզմներում առկա բացերը՝ առաջարկելու նոր, գործառույթային տարբերակներ, որոնք առավելագույնի կհասցնեն առկա ռեսուրսների օգտագործումը, առողջապահության, սոցիալական պաշտպանության, զբաղվածության և կրթության ծառայությունների, քաղաքացիական հասարակության և այլ կազմակերպությունների գործունեության ոլորտներում ջանքերի համակարգումը՝ ապահովելով ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց համար նախատեսված ծրագրերի արդյունավետությունը:

Առողջապահության հասանելիություն

2.1 Բարելավել բուժաշխատողների՝ առանցքային համախմբության ներկայացուցիչներին ծառայություններ մատուցելու վերաբերյալ վերապատրաստման որակը.

- ✓ ՄԻԱՎ թեստավորումից առաջ և հետո խորհրդատվություն տրամադրում,
- ✓ Թեսթավորման արդյունքների գաղտնիության պահպանում (ներառյալ բացասականները),
- ✓ Իրազեկված համաձայնություն,
- ✓ Ընտանիքի պլանավորման, սեռական և վերարտադրողական իրավունքների վերաբերյալ խորհրդատվության տրամադրում:

2.2 Կազմակերպել առաջնային բժշկական օգնության համակարգում ներգրավված գիներկոլոգների և այլ բուժաշխատողների կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ՝ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խտրականության բացառման վերաբերյալ**:**

2.3 Բժշկական ուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում ներառել թեմաներ մարդու իրավունքների, գենդերային հիմնախնդիրների, առանցքային համախմբությունների ներկայացուցիչների նկատմամբ խարանի և խտրականության բացառման վերաբերյալ, և այդ գիտելիքներն ինստիտուցիոնալացնել կրթական ծրագրերում:

2.4 Ուժեղացնել ԿՍ-ների, SUS-ների, ԿՍԿ-ների և ՏԳ-ների հետ աշխատելու ուղեցույցների կիրառման մշտադիտարկումը:

Կրթության հասանելիություն

2.5 Բարելավել բոլոր մակարդակների կրթական հաստատությունների դասավանդողների կարողությունները՝ նախադպրոցականից մինչև բարձրագույն և հետբուհական կրթություն, յուրացնելու՝ ինչպես կանխարգելել ՄԻԱՎ-ը և խտրականություն չդրսևորել ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և առանցքային համախամբության ներկայացուցիչների նկատմամբ:

2.6 Բարձրացնել կրթական ծառայություններ մատուցողների իրազեկվածությունը ՄԻԱՎ-ի փոխանցման, ՄԻԱՎ-ի կանխարգելման և բուժման վերաբերյալ՝ ներառյալ մարդու իրավունքների, գենդերային հիմնախնդիրների, առանցքային համախամբության ներկայացուցիչների նկատմամբ խարանի և խտրականության բացառման թեմաները:

2.7 Բժշկական քոլեջներում և բուհերում (միջնակարգ, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ) նախաձեռնել գենդերային բազմազանության, սեռական գրավչության և համանման թեմաների ուսումնասիրության մոտեցումների փոփոխություն:

2.8 Մշտադիտարկել ՄԻԱՎ-ի և սեռավարակների կանխարգելման վերաբերյալ դպրոցական կրթական ծրագրերը:

Ներքին խարան

2.9 Ընդլայնել «հավասարը՝ հավասարին» խորհրդատվության, ինքնօգնության խմբերի, հոգեբանական և սոցիալական աջակցության, հովանավորչության և աջակցության ծրագրերը՝ հատուկ ուշադրություն դարձնելով ՄԻԱՎ-ով ապրող կանանց և առանցքային համախամբության ներկայացուցիչներին:

2.10 Ապահովել բուժառուներին տրամադրվող պարտադիր խորհրդատվությունը մինչև ՀՈՎ բուժման մեկնարկը՝ վերջիններիս իրազեկելու, քաջալարելու և աջակցելու նպատակով:

2.11 ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց մերձավոր շրջապատի համար (ներառյալ՝ հարազատներ և զուգընկերներ) մշակել ուսուցողական ծրագրեր, որոնք կներառեն թեմաներ՝ ուղղված ՄԻԱՎ-ով ապրելու առանձնահատկություններին, ախտորոշման բացահայտմանը և փոխանցման ուղիներին:

3. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ (առաջարկություններ՝ ուղղված կառավարությանը, ԻՀԱԿ-ին, տեղական և միջազգային ՀԿ-ներին)

Ամրապնդել ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և շահագրգիռ կողմերի (բժշկական, սոցիալական և կրթական ոլորտի աշխատուժ, իրավապահ մարմինների ներկայացուցիչներ և այլն) իրավական գրագիտությունը և ապահովել, որպեսզի ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ, մասնավորապես՝ կանայք և առանցքային համախմբության ներկայացուցիչները, ժամանակին ունենան որակյալ իրավական աջակցության հասանելիություն: Նման աջակցություն ներկայումս գործում է, սակայն այն հիմնականում իրավաբանական խորհրդատվության տեսքով է: Անհրաժեշտ է տրամադրել համապատասխան իրավական աջակցություն, մասնավորապես՝ փաստաթղթերի պատրաստման և ներկայացման հարցում:

3.1 Հետաքննել առանցքային համախմբության ներկայացուցիչների նկատմամբ իրավապահների կողմից կատարված բռնության դեպքերը և ցանկացած այլ անօրինական գործողություն:

3.2 ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և առանցքային համախմբության ներկայացուցիչների համար իրականացնել իրավական գրագիտության բարելավման ծրագիր՝ առողջապահական և կրթական հաստատություններում, ինչպես նաև աշխատավայրում խարանի և խտրականության բացառման վերաբերյալ՝ ներառյալ աջակցող (ուղեկցող) ծառայությունների վերաբերյալ համապարփակ իրազեկության բարձրացումը:

3.3 Ներդնել ուղղորդման համակարգ՝ վերաբերող ՀԿ-ների բազմամասնագիտական խմբի կողմից խորհրդատվության և աջակցության տրամադրմանը:

3.4 Իրավական աջակցություն ցուցաբերել խտրականության և ՄԻԱՎ-ի փոխանցման քրեականացման բոլոր դեպքերի համար:

3.5 Ապահովել ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց համայնքի անվտանգությունը խտրականության դրսևորման դեպքերում, ստեղծել ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և առանցքային համախմբությունների ներկայացուցիչների համար խնամքի ապահովման «ուղիներ» (ապաստաններ, իրավական աջակցություն, ՁԼՄ-ների ուշադրություն և պետական մարմինների կողմից վերահսկողություն):

3.6 Ամրապնդել իրավապահ և դատական մարմինների՝ բռնության դեպքերի կապակցությամբ պատշաճ հետապնդում և դատական քննություն իրականացնելու կարողությունները՝ խթանելու համանման գործերի հանրային իրազեկման, լուսաբանման և բռնության դեպքերի դատական պաշտպանության պրակտիկան, և զարգացնելու խախտված իրավունքների պաշտպանության պրակտիկան:

3.7 Ստեղծել արդյունավետ իրավական դաշտ հասարակության մեջ խարանի, խտրականության և բռնության դեպքերի նկատմամբ անհանդուրժողականություն սերմանելու համար:

3.8 Հետաքննել դեպքերը և քրեական պատասխանատվության ենթարկել առողջապահական համակարգի, իրավապահ մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների բոլոր աշխատակիցներին՝ ՄԻԱՎ-ի ախտորոշման, ինչպես նաև առանցքային համախմբությունների ներկայացուցիչների ապրելակերպի մասին անձնական տեղեկությունների բացահայտման համար:

3.9 Կատարելագործել գործող իրավապահ համակարգի գործունեությունը, որը պետք է շարունակաբար և լիարժեքորեն ապահովի ՄԻԱՎ-ով ապրող անձանց իրավունքների պաշտպանությունը:

4. ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀԱՄԱԽՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ ԵՎ ՄԻԱՎ-ՈՎ ԱՊՐՈՂ ԿԱՆԱՑՔ

(առաջարկություններ՝ ուղղված կառավարությանը, ԻՀԱԿ-ին, տեղական և միջազգային ՀԿ-ներին)

4.1 Ապահովել հասանելիություն ճգնաժամային կենտրոններում և ապաստարաններում ՄԻԱՎ-ով ապրող կանանց, կոմերցիոն սեռական ծառայություններ մատուցողներին, ԼԳԲՏՔ համայնքի ներկայացուցիչներին՝ բռնության և ոտնձգությունների ենթարկվելու դեպքում:

4.2 Բարձրացնել պետական սոցիալական աջակցության ծրագրերի հասցեականությունը ՄԻԱՎ-ով ապրող անձանց համար՝ դրանք դարձնելով առավել հասանելի, ներառական և գենդերազգայուն:

4.3 Ոլորտային փորձառություն ունեցող ՔՀԿ-ների հետ համագործակցությամբ շարունակաբար իրականացնել տեղեկատվական բնույթի իրազեկման աշխատանքներ՝ բուժաշխատողների (այդ

թվում՝ ԻՀԱԿ-ի, պետական հիվանդանոցների և պոլիկլինիկաների) և իրավապահ մարմինների աշխատակիցների համար հետևյալ թեմաներով.

- ✓ Խարանի և խտրականության բացառում ՄԻԱՎ-ով ապրող կանանց և առանցքային համախմբությունների ներկայացուցիչների նկատմամբ,
- ✓ Առանցքային համախմբությունների ներկայացուցիչների ներկայացնում և վնասելու նվազեցմանն ուղղված միջոցառումներ,
- ✓ Իրազեկված համաձայնություն և տվյալների գաղտնիություն:

4.4 Մշակել գենդերային դերերի մասին կարծրատիպային պատկերացումների փոփոխությանն ուղղված ծրագրեր, և դրանք իրականացնել ՁԼՄ-ների հետ հետևողական աշխատանքի միջոցով՝ խարանի, խտրականության և անհավասարության հիմնախնդիրների վերաբերյալ հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով:

5. ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԱՐԳԱՑՈՒՄ (առաջարկություններ՝ ուղղված տեղական և միջազգային ԿՀ-ներին և ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց Կենտրոնական Ասիայի ցանցին)

Աջակցել ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց համայնքի ստեղծմանը, ներառելով «հավասարը՝ հավասարին» խորհրդատուներին և այլ պրակտիկ մասնագետներին, վերջիններիս փորձի փոխանակմանը, լավագույն փորձառության տարածմանը և մասնագիտական զարգացմանը խթանելու նպատակով:

Համոզվել, որ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց սպասարկող բժշկական անձնակազմը շարունակաբար վերապատրաստվում և պահպանում է էթիկական և գաղտնիության կանոնները:

6. ՇԱՀԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԻ ՄՇԱԿՈՒՄ՝ ԸՆԴԴԵՄ ՄԻԱՎ-ՈՎ ԱՊՐՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԽԱՐԱՆԻ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ (առաջարկություններ՝ ուղղված կառավարությանը, ԻՀԱԿ-ին, տեղական և միջազգային ՀԿ-ներին)

Բոլոր շահագրգիռ կողմերի հետ համատեղ մշակել և իրականացնել շահերի պաշտպանության ծրագիր՝ ի պատասխան այս հետազոտության արդյունքների: ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ պետք է ներգրավվեն համանման ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման գործընթացներում: Առաջարկվում է սույն հետազոտության արդյունքների և բացահայտումների հիման վրա մշակել հատուկ միջոցառումներ և համապատասխան ցուցանիշներ, որոնք կնպաստեն ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի 2022-2026 թվականների ազգային ծրագրի իրականացմանը:

6.1 Ստեղծել համագործակցության հստակ մեխանիզմներ բոլոր գերատեսչությունների միջև՝ ակտիվորեն ներգրավելով ոլորտում փորձառու ՔՀԿ-ներին՝ խրախուսելով նրանց մասնակցությունը և դերը բազմաճյուղ համագործակցության ցանցերի և առաջնահերթությունների ստեղծման գործում, ինչպես նաև ստեղծելով հարթակ ՔՀԿ-ների և պետական գերատեսչությունների միջև ավելի լայն համագործակցության և երկխոսության համար ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի, խտրականության և բռնության դեմ պայքարի համատեքստում:

6.2 Փորձառու ՔՀԿ-ների հետ համագործակցելով շարունակաբար իրականացնել տեղեկատվական իրազեկության բարձրացման աշխատանքներ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հիմնարար

իրավունքների վերաբերյալ՝ առանցքային համախմբությունների ներկայացուցիչների նկատմամբ խարանը, խտրականությունը և բռնության դեպքերը վերացնելու նպատակով:

6.3 Իրականացնել տեղեկատվական արշավներ սոցիալական մեդիայի, իրազեկման հաղորդումների, կրթական ծրագրերի և հասանելի այլ եղանակներով՝ ապահովելու հասարակությանը ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանը, խտրականությունը և բռնությունը դատապարտելու հարցում կրթելը, ՄԻԱՎ-ով ապրող անձանց ոչ բռնի և ոչ խտրական վերաբերմունքի դրսևորումները: Իրազեկման միջոցառումներում ներառել նաև խախտված իրավունքների պաշտպանության հնարավորությունների և գործող մեխանիզմների վերաբերյալ տեղեկատվությունը:

7. ՀԱՎԱՔԱԳՐՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ ՀԵՏԱԳԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(առաջարկություններ՝ ուղղված տեղական և միջազգային ՀԿ-ներին, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց Կենտրոնական Ասիայի ցանցին)

ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ինդեքս 2.0 հետազոտության տվյալների բազան կարող է օգտագործվել հետագա հետազոտությունների համար՝ որոշակի խմբերի կամ համատեքստերի հետ կապված կոնկրետ ուսումնասիրության հարցերի լուծման նպատակով: Օրինակ, պլանավորվող հետազոտությունները կարող են դիտարկել զբաղվածության կարգավիճակի և ներքին խարանի կամ հանրության վերաբերմունքի միջև փոխհարաբերությունները: Հետաքրքիր կլիներ փոփոխականների միջև փոխհարաբերությունները դիտարկել նաև գենդերային տեսանկյունից: Հաշվի առնելով, որ խարանն ու խտրականությունը հատկապես ազդում են կանանց և առանցքային համախմբությունների ներկայացուցիչների վրա, հետագա ուսումնասիրությունները կարող են լույս սփռել նման վարքագիծը պայմանավորող գործոնների բացահայտման վրա:

6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Խարանն ու խտրականությունը Հայաստանում լայնորեն տարածված երևույթ են ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում: Ներքին խարանն իր «կարծրությամբ» խստապես ազդում է կանանց և առանցքային համախմբությունների ներկայացուցիչների վրա, որոնք Հայաստանում չեն կարողանում ինքնադրսևորվել նաև աշխատաշուկայում: ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ չեն կարող լինել ընդունված և աջակցություն ստանալ անգամ հարազատ միջավայրից իրենց կարգավիճակի և/կամ գենդերային ինքնության պատճառով: Առանց ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց համաձայնության իրականացված բազմաթիվ ՄԻԱՎ թեստավորումները խոսում են այն մարտահրավերների մասին, որոնք առաջանում են բուժաշխատողների կողմից էթիկայի կանոնները պահպանելու և մարդու իրավունքները հարգելու հրամայականի անտեսումից:

Ընդհանուր առմամբ, ՀՀ-ում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց իրավիճակը, հատկապես կանանց և առանցքային համախմբության ներկայացուցիչների շրջանում, կարող է բնութագրվել ինքնախարանի բարձր մակարդակով: Խարանը բացասաբար է անդրադառնում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց, մասնավորապես՝ կանանց, տնտեսական և հոգեսոցիալական բարեկեցության վրա: Բանավոր ոտնձգության ենթարկվելը առանցքային համախմբության ներկայացուցիչների կողմից ապրած խտրականության ամենատարածված ձևն է: ՄԻԱՎ-ով ապրող կանայք, բառացիորեն, բռնության են ենթարկվել իրենց ՄԻԱՎ կարգավիճակի պատճառով 5 անգամ ավելի հաճախ, քան ՄԻԱՎ-ով ապրող տղամարդիկ:

ՀՀ-ում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ինդեքս 2.0 հետազոտության արդյունքները թույլ են տվել եզրահանգել հետևյալի մասին.

- Հարցման մասնակիցների 51%-ն անցել է ՄԻԱՎ թեստավորում առանց իր իմացության և համաձայնության, ընդ որում՝ նրանց կեսից ավելին կանայք են:
- ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց մեծ մասը (99.1%) հարցազրույցի ժամանակ եղել է ՄԻԱՎ-ի բուժում ստանալիս:
- Յուրաքանչյուր երրորդ ՄԻԱՎ-ով ապրող մարդ չի ունեցել դրական փորձառություն իր կարգավիճակը հարազատներին և մտերիմ մարդկանց բացահայտելիս:
- Գրեթե բոլոր ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ հակված են թաքցնել իրենց կարգավիճակը այլ մարդկանցից:
- ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց 64%-ը որոշել է անցնել թեստավորում վեց ամսում կամ ավելի պակաս ժամանակում այն պահից սկսած, երբ առաջին անգամ այդ միտքը ծագել է իրենց մոտ:
- ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց 82.5%-ը նշել է, որ իրենք բաց չեն թողել ՀՌՎ բուժումը վախի պատճառով, որ ինչ-որ մեկը կիմանա իրենց կարգավիճակի մասին: Միջինում յուրաքանչյուր չորրորդ ՄԻԱՎ-ով ապրող մարդ ընդհատել է բուժումը ՄԻԱՎ կարգավիճակի վերաբերյալ որևէ բան անելու պատրաստակամության բացակայության պատճառով, մինչդեռ կանանց և ԿՍ-ների մոտ այս պատճառը վերաբերելի է մոտավորապես մեկ երրորդին:
- Ըստ ԿՍ-ների 4.3%-ի՝ բժշկական անձնակազմը խուսափում է նրանց հետ ֆիզիկական շփումից և լրացուցիչ նախազգուշական միջոցներ է ձեռնարկում նրանց ՄԻԱՎ դրական կարգավիճակով պայմանավորված և սա այն դեպքում, երբ ԿՍ-ների 75%-ը չի հայտնել իր

կարգավիճակի մասին ընդհանուր բժշկական ծառայությունների դիմելիս, որտեղ նրանք ստանում են ՀՈՎ բուժում:

- ՏԳ-ների կեսից ավելին հայտնել է, որ դուրս են մնացել ընտանեկան միջոցառումներից և ենթարկվել են ոտնձգությունների ու ֆիզիկական բռնության՝ իրենց գենդերային նույնականացման պատճառով: Բացի այդ, ՏԳ-ները հակված չեն բացահայտելու իրենց գենդերային նույնականացումը իրենց բժշկական փաստաթղթերում:
- Այն փաստը, որ բոլոր ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ ցանկանում են թաքցնել իրենց կարգավիճակը և սեռական կողմնորոշումը մյուսներից, փաստում է նրանց վստահության ցածր մակարդակի մասին իրենց անմիջական միջավայրի, առողջապահական համակարգի, սոցիալական ծառայությունների և, ընդհանուր առմամբ, ողջ հասարակության նկատմամբ: Սա վկայում է սոցիալական և վարքագծային փոփոխության գործողությունների շարունակական, նպատակային միջոցառումների իրականացման անհրաժեշտության մասին, որոնք ակնհայտորեն չպետք է սահմանափակվեն միայն իրազեկման արշավներով:

ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում իրականացված հետազոտությունը և հավաքագրված տվյալների վերլուծությունը թույլ է տալիս.

- փաստագրել հանրապետությունում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց տարբեր փորձառությունները ՄԻԱՎ-ի հետ կապված խարանի և խտրականության վերաբերյալ,
- համեմատել ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց իրավիճակը մեր և տարբեր երկրներում որոշակի խնդիրների առնչությամբ,
- ապացուցահեն մոտեցման հիման վրա՝ բարձրաձայնել քաղաքականությունների փոփոխության և նպատակային ծրագրային միջամտությունների անհրաժեշտության մասին:

Հաշվի առնելով ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ինդեքս 2.0 հետազոտության արդյունքները՝ նպատակահարմար է իրականացնել տրանգուլյացիա այլ հետազոտությունների արդյունքների հետ, որոնք ուսումնասիրում են ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նպատմամբ խարանն ու խտրականությունը այլ համատեքստում, օրինակ, բուժհաստատություններում կամ, ընդհանրապես, հասարակության շրջանում: Ժամանակի ընթացքում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ինդեքս հետազոտության իրականացման կրկնությունը, այլ ուսումնասիրությունների հետ զուգընթաց, առանցքային դեր կխաղա ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի և խտրականության հիմնահարցերի վերաբերյալ հանրության հավաքական ըմբռնումը ձևավորելու, խորացնելու և բարձրացնելու տեսանկյունից:

7. ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. «ՀՀ մարզերը և Երևանը թվերով», ՀՀ Վիճակագրական կոմիտե, 2021, www.armestat.am
2. «ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման 2022-2026թթ. միջոցառումների ծրագիր», ՀՀ Առողջապահության նախարարություն, 2022
3. Խարանին և խտրականությանը վերաբերող հաշվետվություններ և զեկույցներ հետևյալ հղմամբ՝ https://realwrp.org/en/reports և https://realwrp.org/en/researches
4. Վիճակագրական տվյալներ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» (ԻՀԱԿ) ՓԲ ընկերության կողմից (ՀՀ Առողջապահության նախարարություն)
5. People Living with HIV Stigma Index 2.0.; Guidance on the Sample Size Calculator. https://hall.shinyapps.io/PLHIV_Stigma_Sample_Size_Calculator/

Հավելված I. Ամփոփ աղյուսակներ

Պատասխան	Ընդամենը հարցվածներ		ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ				SUS		ԿՍԿ		Բիսեքսուալ		ԿՍ		ԹՕ		ՏԳ		Ոչ բինար	
			Կին		Տղամարդ															
	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%
5. Դուք որևէ ինտիմ/սեքսուալ հարաբերություններ ունե՞ք ներկայումս (անկախ նրանից՝ ամուսնացա՞ծ եք, թե՞ ոչ):																				
Այո	378	71.2%	85	51.2%	293	80.3%	20	90.9%	1	33.3%	5	100%	19	79.2%	60	81.1%	3	60.0%	4	80.0%
Ոչ	153	28.8%	81	48.8%	72	19.7%	2	9.1%	2	66.7%	0	0.0%	5	20.8%	14	18.9%	2	40.0%	1	20.0%
Ընդամենը	**531**	**100.0%**	**166**	**100.0%**	**365**	**100.0%**	**22**	**100.0%**	**3**	**100.0%**	**5**	**100.0%**	**24**	**100.0%**	**74**	**100.0%**	**5**	**100.0%**	**5**	**100.0%**

Պատասխան	Ընդամենը հարցվածներ		ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ				SUS		ԿՍԿ		Բիսեքսուալ		ԿՍ		ԹՕ		ՏԳ		Ոչ բինար	
			Կին		Տղամարդ															
	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%
6. Արդյո՞ք Ձեր զուգընկերը ՄԻԱՎ կարգավիճակ ունի: Եթե ունեք մեկից ավելի զուգընկերներ, ապա նրանցից որևէ մեկը ապրու՞մ է ՄԻԱՎ-ով:																				
Այո, իմ զուգընկեր(ները) ունի(ունեն) ՄԻԱՎ դրական կարգավիճակ	137	36.2%	43	50.6%	94	32.1%	3	15.0%	0	0.0%	0	0.0%	1	5.3%	26	43.3%	0	0.0%	1	25.0%
Ոչ, իմ զուգընկեր(ները) չունի(չունեն) ՄԻԱՎ դրական կարգավիճակ	197	52.1%	31	36.5%	166	56.7%	15	75.0%	1	100.0%	5	100.0%	12	63.2%	30	50.0%	3	100.0%	2	50.0%
Ես վստահ չեմ արդյոք իմ զուգընկեր(ները) ունի(ունեն) ՄԻԱՎ դրական կարգավիճակ, թե ոչ	44	11.6%	11	12.9%	33	11.3%	2	10.0%	0	0.0%	0	0.0%	6	31.6%	4	6.7%	0	0.0%	1	25.0%
Ընդամենը	**378**	**100.0%**	**85**	**100.0%**	**293**	**100.0%**	**20**	**100.0%**	**1**	**100.0%**	**5**	**100.0%**	**19**	**100.0%**	**60**	**100.0%**	**3**	**100.0%**	**4**	**100.0%**

Պատասխան	Ընդամենը հարցվածներ		ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ				SUS		ԿՍԿ		Բիսեքսուալ		ԿՍ		ԹՕ		ՏԳ		Ոչ բինար	
			Կին		Տղամարդ															
	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%
8. Որևէ տեսակի ֆորմալ կրթություն ստանու՞մ եք:																				
Այո	19	3.6%	6	3.6%	13	3.6%	2	9.1%	0	0.0%	2	40.0%	3	12.5%	0	0.0%	1	20.0%	0	0.0%
Ոչ	512	96.4%	160	96.4%	352	96.4%	20	90.9%	3	100.0%	3	60.0%	21	87.5%	74	100.0%	4	80.0%	5	100.0%
Ընդամենը	**531**	**100.0%**	**166**	**100.0%**	**365**	**100.0%**	**22**	**100.0%**	**3**	**100.0%**	**5**	**100.0%**	**24**	**100.0%**	**74**	**100.0%**	**5**	**100.0%**	**5**	**100.0%**

Պատասխան	Ընդամենը հարցվածներ		ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ				SUS		ԿՍԿ		Բիսեքսուալ		ԿՍ		ԹՕ		ՏԳ		Ոչ բինար	
			Կին		Տղամարդ															
	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%
9. Ո՞րն է Ձեր ստացած ֆորմալ կրթության բարձրագույն մակարդակը:																				
Չեմ ստացել ֆորմալ	8	1.5%	6	3.6%	2	0.5%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	0	0.0%

կրթություն																				
Տարրական դպրոց	16	3.0%	7	4.2%	9	2.5%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	2	8.3%	1	1.4%	0	0.0%	0	0.0%
Միջնակարգ/ ավագ դպրոց	300	56.5%	85	51.2%	215	58.9%	10	45.5%	2	66.7%	1	20.0%	9	37.5%	56	75.7%	1	20.0%	3	60.0%
Միջին մասնագիտական կրթություն	139	26.2%	47	28.3%	92	25.2%	4	18.2%	0	0.0%	3	60.0%	7	29.2%	14	18.9%	3	60.0%	2	40.0%
Բարձրագույն կրթություն	68	12.8%	21	12.7%	47	12.9%	8	36.4%	1	33.3%	1	20.0%	6	25.0%	3	4.1%	1	20.0%	0	0.0%
Ընդամենը	**531**	**100.0%**	**166**	**100.0%**	**365**	**100.0%**	**22**	**100.0%**	**3**	**100.0%**	**5**	**100.0%**	**24**	**100.0%**	**74**	**100.0%**	**5**	**100.0%**	**5**	**100.0%**

Պատասխան	**Ընդամենը հարցվածներ**		**ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ**				**SUS**		**ԿՍԿ**		**Բիսեքսուալ**		**ԿՍ**		**ԹՕ**		**ՏԳ**		**Ոչ բինար**	
			Կին		**Տղամարդ**															
	n	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**
10. Նշված պնդումներից ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր ներկա աշխատանքային կարգավիճակը:																				
Ամբողջ դրույքով (որպես աշխատակից)	160	30.1%	44	26.5%	116	31.8%	9	40.9%	0	0.0%	4	80.0%	7	29.2%	19	25.7%	2	40.0%	1	20.0%
Կես դրույքով (որպես աշխատակից)	39	7.3%	17	10.2%	22	6.0%	3	13.6%	0	0.0%	0	0.0%	3	12.5%	4	5.4%	0	0.0%	1	20.0%
Աշխատում եմ ամբողջ դրույքով, բայց ոչ որպես աշխատակից (ինքնազբաղված կամ բիզնեսի սեփականատեր)	42	7.9%	7	4.2%	35	9.6%	4	18.2%	0	0.0%	1	20.0%	2	8.3%	0	0.0%	2	40.0%	0	0.0%
Կատարում եմ անկանոն կամ ոչ պաշտոնական կես դրույքով աշխատանք (ինքնազբաղված կամ վճարովի աշխատանք այլոց համար)	90	16.9%	24	14.5%	66	18.1%	2	9.1%	1	33.3%	0	0.0%	2	8.3%	12	16.2%	0	0.0%	2	40.0%
Թոշակի անցած/թոշակառու	53	10.0%	14	8.4%	39	10.7%	0	0.0%	0	0.0%	0	0.0%	1	4.2%	15	20.3%	0	0.0%	1	20.0%
Գործազուրկ	147	27.7%	60	36.1%	87	23.8%	4	18.2%	2	66.7%			9	37.5%	24	32.4%	1	20.0%	0	0.0%
Ընդամենը	**531**	**100.0%**	**166**	**100.0%**	**365**	**100.0%**	**22**	**100.0%**	**3**	**100.0%**	**5**	**100.0%**	**24**	**100.0%**	**74**	**100.0%**	**5**	**100.0%**	**5**	**100.0%**

Պատասխան	**Ընդամենը հարցվածներ**		**ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ**				**SUS**		**ԿՍԿ**		**Բիսեքսուալ**		**ԿՍ**		**ԹՕ**		**ՏԳ**		**Ոչ բինար**	
			Կին		**Տղամարդ**															
	n	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**	**n**	**%**

11. Վերջին 12 ամիսներին որքա՞ն հաճախ ի վիճակի չեք եղել բավարարելու հիմնական կարիքները: (Օրինակ՝ սնունդ, կացարան կամ հագուստ)																				
Երբեք	128	24.1%	23	13.9%	105	28.8%	12	54.5%	1	33.3%	4	80.0%	8	33.3%	13	17.6%	1	20.0%	3	60.0%
Երբեմն	267	50.3%	96	57.8%	171	46.8%	6	27.3%	1	33.3%	1	20.0%	8	33.3%	32	43.2%	3	60.0%	1	20.0%
Ժամանակի մեծ մասը	136	25.6%	47	28.3%	89	24.4%	4	18.2%	1	33.3%	5	100.0%	8	33.3%	29	39.2%	1	20.0%	1	20.0%
Ընդամենը	**531**	**100.0%**	**166**	**100.0%**	**365**	**100.0%**	**22**	**100.0%**	**3**	**100.0%**	**5**	**100.0%**	**24**	**100.0%**	**74**	**100.0%**	**5**	**100.0%**	**5**	**100.0%**

Պատասխան	Ընդամենը հարցվածներ		ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ				SUS		ԿՍԿ		Բիսեքսուալ		ԿՍ		ԹՕ		ՏԳ		Ոչ բինար	
			Կին		Տղամարդ															
	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%

15. Ասացեք խնդրեմ, արդյո՞ք Դուք «Համաձայն եք», «Որոշ չափով համաձայն եք» կամ «Համաձայն չեք» հետևյալ պնդումների հետ՝ Ձեր կարգավիճակի բացահայտման փորձառության հետ կապված (խնդրում եմ ընտրեք մեկ պատասխան ներքևում նշված յուրաքանչյուր կետի համար): Ընդհանուր առմամբ, իմ ՄԻԱՎ կարգավիճակը մտերիմ մարդկանց (օրինակ՝ զուգընկեր, ընտանիք, մտերիմ ընկերներ) բացահայտելը դրական փորձառություն է եղել:																			
Համաձայն եմ	221	41.6%	82	49.4%	139	38.1%	2	9.1%	2	66.7%	1	20.0%	6	25.0%	30	40.5%	2	40.0%	3	60.0%
Որոշ չափով համաձայն եմ	130	24.5%	34	20.5%	96	26.3%	8	36.4%	1	33.3%	2	40.0%	11	45.8%	16	21.6%	2	40.0%	2	40.0%
Համաձայն չեմ	153	28.8%	44	26.5%	109	29.9%	9	40.9%	0	0.0%	2	40.0%	6	25.0%	22	29.7%	1	20.0%	0	0.0%
Դժ. պատ.	27	5.1%	6	3.6%	21	5.8%	3	13.6%	0	0.0%	0	0.0%	1	4.2%	6	8.1%	0	0.0%	0	0.0%
Ընդամենը	**531**	**100.0%**	**166**	**100.0%**	**365**	**100.0%**	**22**	**100.0%**	**3**	**100.0%**	**5**	**100.0%**	**24**	**100.0%**	**74**	**100.0%**	**5**	**100.0%**	**5**	**100.0%**

Պատասխան	Ընդամենը հարցվածներ		ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ				SUS		ԿՍԿ		Բիսեքսուալ		ԿՍ		ԹՕ		ՏԳ		Ոչ բինար	
			Կին		Տղամարդ															
	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%

Ընդհանուր առմամբ, իմ մտերիմ մարդիկ եղել են աջակցող, երբ առաջին անգամ իմացել են իմ ՄԻԱՎ կարգավիճակի մասին:																				
Համաձայն եմ	342	64.4%	113	68.1%	229	62.7%	9	40.9%	2	66.7%	2	40.0%	9	37.5%	47	63.5%	2	40.0%	4	80.0%
Որոշ չափով համաձայն եմ	80	15.1%	17	10.2%	63	17.3%	8	36.4%	0	0.0%	1	20.0%	5	20.8%	11	14.9%	2	40.0%	0	0.0%
Համաձայն չեմ	95	17.9%	32	19.3%	63	17.3%	4	18.2%	1	33.3%	1	20.0%	8	33.3%	13	17.6%	1	20.0%	1	20.0%
Դժ. պատ.	14	2.6%	4	2.4%	10	2.7%	1	4.5%	0	0.0%	1	20.0%	2	8.3%	3	4.1%	0	0.0%	0	0.0%
Ընդամենը	**531**	**100.0%**	**166**	**100.0%**	**365**	**100.0%**	**22**	**100.0%**	**3**	**100.0%**	**5**	**100.0%**	**24**	**100.0%**	**74**	**100.0%**	**5**	**100.0%**	**5**	**100.0%**

Պատասխան	Ընդամենը հարցվածներ		ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ				SUS		ԿՍԿ		Բիսեքսուալ		ԿՍ		ԹՕ		ՏԳ		Ոչ բինար	
			Կին		Տղամարդ															
	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%

Ընդհանուր առմամբ, իմ ՄԻԱՎ կարգավիճակը բացահայտելը այն մարդկանց համար, որոնց շատ լավ չեմ ճանաչել, եղել է դրական փորձառություն:																				
Համաձայն եմ	57	10.7%	21	12.7%	36	9.9%	1	4.5%	1	33.3%	2	40.0%	5	20.8%	9	12.2%	1	20.0%	0	0.0%
Որոշ չափով համաձայն եմ	27	5.1%	8	4.8%	19	5.2%	0	0.0%	0	0.0%	1	20.0%	2	8.3%	7	9.5%	1	20.0%	0	0.0%
Համաձայն չեմ	403	75.9%	116	69.9%	287	78.6%	19	86.4%	2	66.7%	2	40.0%	14	58.3%	50	67.6%	3	60.0%	4	80.0%
Դժ. պատ.	44	8.3%	21	12.7%	23	6.3%	2	9.1%	0	0.0%	0	0.0%	3	12.5%	8	10.8%	0	0.0%	1	20.0%
Ընդամենը	**531**	**100.0%**	**166**	**100.0%**	**365**	**100.0%**	**22**	**100.0%**	**3**	**100.0%**	**5**	**100.0%**	**24**	**100.0%**	**74**	**100.0%**	**5**	**100.0%**	**5**	**100.0%**

Պատասխան	Ընդամենը հարցվածներ		ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ				SUS		ԿՍԿ		Բիսեքսուալ		ԿՍ		ԹՕ		ՏԳ		Ոչ բինար	
			Կին		Տղամարդ															

	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%
Ընդհանուր առմամբ, այն մարդիկ, որոնց ես շատ լավ չեմ ճանաչել, եղել են աջակցող, երբ իմացել են իմ ՄԻԱՎ դրական կարգավիճակի մասին:																				
Համաձայն եմ	63	11.9%	26	15.7%	37	10.1%	1	4.5%	1	33.3%	2	40.0%	5	20.8%	12	16.2%	1	20.0%	0	0.0%
Որոշ չափով համաձայն եմ	24	4.5%	7	4.2%	17	4.7%	0	0.0%	0	0.0%	1	20.0%	2	8.3%	6	8.1%	1	20.0%	0	0.0%
Համաձայն չեմ	407	76.6%	118	71.1%	289	79.2%	19	86.4%	2	66.7%	2	40.0%	15	62.5%	50	67.6%	3	60.0%	4	80.0%
Դժ. պատ.	37	7.0%	15	9.0%	22	6.0%	2	9.1%	0	0.0%	0	0.0%	2	8.3%	6	8.1%	0	0.0%	1	20.0%
Ընդամենը	**531**	**100.0%**	**166**	**100.0%**	**365**	**100.0%**	**22**	**100.0%**	**3**	**100.0%**	**5**	**100.0%**	**24**	**100.0%**	**74**	**100.0%**	**5**	**100.0%**	**5**	**100.0%**
